Ք. Գ. Գրիգորյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1959

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

№	МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ	8

К. Г. ГРИГОРЯН

ГЕРОИ СОВЕТСКОГО СОЮЗА АРМЯНЕ В БОЯХ ЗА ОБОРОНУ КАВКАЗА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	8

9(47)27
Գ

Ֆ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Ա 2235

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1959

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Աշխատությունը նվիրված է Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ հայ ժողովրդի փառապանծ զավակներ՝ Ս. Օհանյանի, Ս. Մկրտչյանի, Ղ. Մաղոյանի, Հ. Ավետիսյանի, Ջ. Կարախանյանի և Ս. Առաքելյանի մարտական գործունեությանը, որոնք Կովկասի համար մղված մարտերում աչքի ընկան իրենց քաջարի մարտական ծառայություններով և արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։

Հայրենական Մեծ պատերազմում սովետա-գերմանական ռազմաճակատի հարավային հատվածում ծավալված ռազմա-ստրատեգիկական գործողությունները վճռական դեր խաղացին Սովետական Բանակի 1942—1943 թթ. մղած խոշոր-գույն ճակատամարտերի պատմության մեջ։ Այդ մարտերում սովետական զորքերը անթառամ փառքով պսակեցին իրենց մարտական դրոշները և հաստատուն նախադրյալներ ստեղծեցին ֆաշիստական բանակի ջախջախման համար։ Այդ հերոսական էպոպեայում կարևոր տեղ են գրավում նաև Կովկասի պաշտպանության համար մղված մարտերում։

Կովկասի համար մղված մարտերը ընդգրկում են 1942 թ. հուլիսից մինչև 1943 թ. հոկտեմբերը և բաժանվում երկու շրջանի։

Առաջին շրջանը, որը սկսվեց Դոնի ստորին հոսանքում, 1942 թ. հուլիսի 25-ից և տևեց մինչև 1943 թ. հոսվարի 3-ը, բնորոշվում է որպես Սովետական Բանակի ժամանակավոր նահանջի և պաշտպանական մարտերի շրջան։

Երկրորդ՝ հարձակողական մարտերի շրջան 1943 թ. հունվարի 3-ից հոկտեմբերի 9-ը՝ երբ սովետական զորքերը Ստալինգրադի տակ ձեռք բերած մեծ հաղթանակ հետ զուգահեռ վճռական գործողություններով ավարտեցին թշնամու ջախջախումը և գերմանական զավթիչներից ազատագրեցին նաև Կովկասը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, Մոսկվայի մատույցներում հիտլերյան բանակն ստացավ իր առաջին ջախջախիչ հարվածը, որով և մերկացվեց նրա «անպարտելիության» մասին եղած առասպելը։ Գերմանական

հրամանատարությունը 1942 թ. ամռանը, իր ուժերը կենտրոնացնելով ռազմաճակատի հարավ-արևմտյան ուղղությամբ, այնտեղ ստեղծեց ուժերի մեծ գերակշռություն և, ժամանակավոր հաջողություններ ձեռք բերելով, անցավ նոր հարձակման, որի նպատակն էր հասնել Ստալինգրադին, Ռոստովին, անցնել Դոնն ու Վոլգան, ջախջախել Սովետական Բանակի ձախ թևը, հարձակումը ծավալել դեպի նավթային շրջանները, գրավել Կովկասը։

Գերմանական զորքերը դեպի հարավ-արևմուտք շարժվեցին հիմնականում երկու՝ «Ա» և «Բ» խմբավորումներով։

Ֆաշիստական զորքերի «Բ» խմբավորումը հաջողվեց մեծ կորուստների գնով, 1942 թ. հուլիսի վերջին դուրս գալ Ստալինգրադից արևմուտք՝ Դոն գետի ոլորանը և անմիջապես սպառնալիքի տակ դնել Ստալինգրադը։

Կարևոր նշանակություն տալով Ստալինգրադի գրավմանը, գերմանական հրամանատարությունը նրա վրա նետել էր իր ամենազորեղ խմբավորումներից՝ վեցերորդ բանակը (գեներալ Ֆելդմարշալ Ֆոն Պաուլյուսի հրամանատարությամբ) և չորրորդ տանկային բանակը։ Գերմանական այդ ուժերին օժանդակում էին ավելի քան հազար տանկ և երկու հազար ինքնաթիռ։ Դեպի Ստալինգրադ նետվեցին նաև ռումինական երրորդ և իտալական ութերորդ բանակները։ Այսպիսով, Ստալինգրադի վրա հարձակվող թշնամու ուժերի ընդհանուր թիվը կազմում էր 50 դիվիզիա[1]։

1942 թ. հուլիսի 25-ին, Դոն գետի ստորին հոսանքի ուղղությամբ, հարձակման անցավ գերմանական բանակի «Ա» խմբավորումը՝ իր կազմում ունենալով 13 հետևակային, 3 լեռնա-հրաձգային, 5 տանկային, 4 մոտո-մեքենայացված, 3 հեծյալ դիվիզիաներ և ավելի քան 1000 ինքնաթիռ[2]։ Այդ խմբավորման նպատակն էր շրջանցել և ոչնչացնել Դոնի հարավային հոսանքի և Կուբանի միջև տեղաբաշխված սովե-

[1] Տե՛ս „Красная звезда", 6 апреля, 1947.

[2] А. С. Завьялов, Т. Е. Калядин, Битва за Кавказ, Военное издательство Мин. Обороны Союза ССР, Москва, 1957. стр. 29.

տական զորքերին, այնուհետև առաջ անցնել դեպի հարավ՝ գրավել Հյուսիսային Կովկասը և Անդրկովկասը։ Հակառակորդը կը ուժեղը երեք ուղղությամբ շարժեց դեպի Կովկաս՝ Ցիմլյանսկի շրջանից՝ Սալսկ, Կոստանդինովսկի և Ռաղդորսկի շրջաններից՝ Ստավրոպոլ, Ռոստովից՝ Կրասնոդար։

Կովկասի գրավման խնդիրը տարիներ շարունակ եղել է գերմանական իմպերիալիզմի նվաճողական ծրագրերի ամենակարևոր օղակներից մեկը։ Կովկասի անսպառ հարստությունների մասին հաճախ են երազել գերմանական զավթիչները։ Դեպի Ռուսաստան և Մերձավոր Արևելք էքսպանսիա ծավալելու նպատակով, գերմանական իմպերիալիստները մշտապես ձգտել են օգտագործել Կովկասը որպես հումքի անսպառ աղբյուր և ռազմաստրատեգիական կամուրջ։

Գերմանա-ֆաշիստական հրամանատարությունը դեռևս 1941 թ. վերջին, դեպի Մոսկվա շարժվելիս, միաժամանակ հարձակում ձեռնարկեց (նոյեմբերի 5—16-ը) հարավային ուղղությամբ՝ նպատակ ունենալով գրավել Ռոստովը, դուրս գալ Հյուսիսային Կովկաս և Մոսկվայի շրջանում կենտրոնացված սովետական զորքերի ուշադրությունը շեղել դեպի հարավ։ Սովետական Բանակի հարավային ռազմաճակատի զորամասերի հակահարձակումները Ռոստովի տակ, ու նրանց դուրս գալը Միուս գետի ափը, ձախողեցին թշնամու առաջխաղացումը Հյուսիսային Կովկասում և միաժամանակ օժանդակեցին Մոսկվայի տակ հակահարձակման անցած սովետական զորքերին։

Գերմանական հրամանատարությունը երկրորդ ու վերջին անգամ իր զորքերը դեպի հարավ շարժեց 1942 թ. ամառային կամպանիայի ժամանակ։ Այդ մասին գերմանական գլխավոր հրամանատարության 1942 թ. ապրիլի 5-ի № 41 դիրեկտիվում ասված է՝ «խնդիրը կայանում է նրանում, որ ...ռազմաճակատի հարավային թևում հասնել ճակատի ճեղքմանը Կովկասի ուղղությամբ..., այնուհետև գրավել Կովկասի նավթային շրջաններն ու Կովկասով անցնող ուղիները»[1]։

[1] Տե՛ս А. С. Завьялов, Т. Е. Калядин, Битва за Кавказ. Военное изд-во Мин. Обороны Союза ССР. Москва, 1957, стр. 13 - 14.

Դաժան օրեր ապրեց մեր Հայրենիքը Ստալինգրադի և Կովկասի պաշտպանության օրերին։ Ահեղ ճակատամարտեր ծավալվեցին Ստալինգրադի տափաստաններում ու Կովկասյան նախալեռներում։ Ստալինգրադի վիթխարի ճակատամարտի հետ միասին սկսվեցին արյունահեղ մարտեր նաև Կովկասի համար։ Մարտական գործողությունները Կովկասում ծավալվեցին չափազանց բարդ իրադրության պայմաններում։ Ոշնամին օր առաջ ձգտում էր գավթել Հյուսիսային Կովկասի արգավանդ հողերը և Անդրկովկասի հարուստ ընդերքը՝ Բաքվի նավթը, Չիատուրիի մարգանեցը, Ալավերդու և Զափանի պղինձը։

Հարավին սպառնացող վտանգը մոբիլիզացրեց և համախմբեց սովետական ժողովրդին Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը։ Կովկասը պաշտպանում էին առանց խտրության սովետական բոլոր ժողովուրդների զավակները, որոնք պայքարում հանդես բերելով հայրենասիրության վառ օրինակներ, փառքով պսակեցին իրենց անունները։ Պատմությանը հայտնի չեն մասսայական հերոսությունների այնպիսի վառ օրինակներ, որոնցով ամենուրեք լի է Հայրենական պատերազմը։

Հերոսների այդ փառապանծ պլեադայի շարքերումն են գտնվում Կովկասի անմահ պաշտպաններ՝ ռուս ժողովրդի զավակ, Սովետական Միության եռակի Հերոս Ալեքսանդր Պոկրիշկինը, Սովետական Միության Հերոսներ՝ ուկրաինացի Դիմիտրի և Իվան Օստապենկո եղբայրները, վրացի Ալեքսեյ Պերմիաշվիլին, հայ Հունան Ավետիսյանը, ադրբեջանցի Իգրիս Սուլեյմանովը և շատ ուրիշներ։

Հայրենական Մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, այդ թվում Կովկասի համար մղվող մարտերում, սովետական բոլոր ազգությունների հետ միասին մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները։ Նրանց կատարած սխրագործությունները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ մեր ժողովուրդը մինչև արյան վերջին կաթիլը նվիրված է իր սրբազան Հայրենիքին և Կոմունիստական պարտիայի մեծ գործին։

Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցու-

Սերգեյ Օհանյանը և Վասիլի Պուգիբյովը ռազմաճակատ մեկնելուց առաջ, 1941 թ. հուլիս

թյան վերաբերյալ 1941 թ. օգոստոսի 25-ին «Պրավդան» գրել է. «Հայ ժողովուրդը, հատկապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում»[1]։

Սույն բրոշյուրում մենք նպատակ ենք դրել հիմնականում լուսաբանելու Լենինյան Կոմերիամիության նախկին ասներ՝ Հունան Ավետիսյանի, Սերգեյ Օհանյանի, Սամսոն Մկրտումյանի, Ղուկաս Մաղոյանի, Ջահան Կարախանյանի և Սուրեն Առաքելյանի սխրագործությունները, որոնք Հայրենական պատերազմի տարիներին մասնակցելով Կովկասի և նրա նավթադաշտը հանդիսացող Ռոստովի ազատագրության համար մղվող մարտերին, հանդես բերեցին բացառիկ անձնազոհություն և արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանը։

* * *

Սերգեյ Մամբրեի Օհանյանը ծնվել է Թբիլիսիում 1921 թ. փետրվարի 23-ին՝ վագոնավարի ընտանիքում։ 1927 թ. Սերգեյը ընդունվել է Թբիլիսիի № 82 հայկական դպրոցը, որտեղ սովորել է մինչև 1935 թ., ապա տեղափոխվել № 38 միջնակարգ դպրոցը, որի դիրեկցիան և ուսուցչական կոլեկտիվը մինչև այժմ էլ լավագույն հիշողություններ են պահում ժրաջան, կարգապահ, առաջադեմ աշակերտ Սերգեյի մասին։

1939 թ. նա ընդունվել է Լենինյան Կոմերիամիության շարքերը. այդ հանդիսավոր օրը Սերգեյը խոստացավ դառնալ հայրենիքին օգտակար սովետական քաղաքացի։

Շուտով նա ցանկություն հայտնեց սովորել ռազմական դպրոցում։ 1940 թ. փետրվարին Օհանյանը դիմեց Թբիլիսիի հրետանային ուսումնարանի պետին. «Սովորում եմ Թբիլիսիի № 38 դպրոցի 9-րդ դասարանում։ Ցանկանում եմ սովորել Ձեր հրետանային ուսումնարանում, ուզում եմ լինել փառապանծ Կարմիր Բանակի շարքերում։ Խնդրում եմ չմերժել խնդիրքս»[2]։

---

[1] «Правда». 25 августа, 1941 г.

[2] *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ, Հայրենական պատերազմի պատմության կաբինետի ար-*

Դիմումին կից Օհանյանը ներկայացնում է № 38 դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության հետևյալ բնութագիրը. «Սերգեյ Օհանյանը սովորում է № 38 դպրոցի 9-րդ դասարանում։ Նա ԼԿԵՄ կազմակերպության ամենաակտիվ և կարգապահ անդամներից մեկն է, ամած հանձնարարությունները կատարում է ժամանակին և մեծ բարեխղճությամբ։ Նա դպրոցի ավագ հերթապահն է. իր սովորելու ընթացքում ոչ մի տույժ չի ունեցել»[1]։

1940 թ. փետրվարի 10-ին Օհանյանը ընդունվել է հրետանային դպրոցը և մեծ եռանդով սկսել մանրամասնորեն ուսումնասիրել իր սիրած զենքի՝ հրետանու գործը։ Սերգեյը դպրոցում մտերմանում է Վասիլի Պուզիրյովի հետ. նրանք մտահոգվում են միևնույն խոհերով ու ձգտումներով, ջանում են դառնալ լավագույն հրետանավորներ։

1941 թ. հունիսի 22-ին, երբ ֆաշիստական զավթիչները ուխտադրուժ հարձակում գործեցին մեր երկրի վրա, Սերգեյ Օհանյանը և իր մտերիմ ընկեր Վասիլի Պուզիրյովը արտահերթ ավարտեցին Բրիլիսի հրետանային ուսումնարանը։ Ուսումնարանի ղեկավարության ամած բնութագրում ասված է. «Օհանյանը վայելում է մեծ հեղինակություն։ Եռանդուն է, վճռական, նախաձեռնող և հնարագետ։ Կարգապահ է և պահանջկոտ։ Մասնագիտական պատրաստականությունը լավ է։ Միատեսակ կերպով զբաղվում է ինչպես իր, այնպես էլ ստորադրյալների դիտելիքների բարձրացմամբ։ Արժանի է արտահերթ ավարտման և լեյտենանտ զինվորական կոչման։ Կարելի է նշանակել մարտկոցի հրամանատար»[2]։ Կարճ ժամանակ թիկունքային ծառայության մեջ դանվելուց հետո Սերգեյը նշանակվում է 606 հրաձգային գնդում հրետանային մարտկոցի հրամանատար, իսկ Վասիլին նույն մարտկոցի հրանոթներից մեկի հրամանատար, 1941 թ. հուլիսին նրանք մեկնեցին ռազմաճակատ։

Հրետանային այն գունդը, որի կազմի մեջ էր Օհանյանի

Խիվ (այսուհետև անվանվելու ենք ՀՊՊԿ արխիվ)։ ֆ. 150, գ. 1, էջ 74։

[1] Նույն տեղում, ֆ. 150, գ. 1, էջ 74—75։

[2] Архив МО. Личное дело № 581020, стр. 9.

մարակոցը, էշելոնով շարժվում էր դեպի հյուսիս-արևմուտք։ Թշնամին հանդիսատ չէր տալիս և անընդհատ ռմբակոծում էր հանապարհը։ Հրամանատարության որոշման համաձայն էշելոնը Ռոստովից փոխում է ուղղությունը դեպի Ուկրաինա ու մտնում մարտի մեջ։

Կատաղի կռիվներ էին մղվում Դնեպրի ափերին։ Այս ահեղ մարտերի համար N հրետանային զորամասի հրամանատարությունը գործողության մեջ էր դրել կրակային բոլոր ուժերը։

Հակառակորդի ստորաբաժանումների դեմ ակտիվ մարտեր էր մղում նաև լեյտենանտ Օհանյանի հրետանային մարտակոցի անձնակազմը։ Նրա հրետանավորները դիպուկ համազարկերով շարքից հանում էին թշնամու շատ տանկեր, ոչնչացնում, հողին հավասարեցնում բազմաթիվ կրակակետեր և մեծ կորուստներ պատճառում նրա կենդանի ուժին։

Մարտական գործողությունների հենց առաջին օրերից Սերգեյը ցուցաբերեց ռազմական մեծ հմտություն և իր վրա գրավեց գնդի հրամանատարության ուշադրությունը։

Լեյտենանտ Օհանյանի մարտակոցը բազմաթիվ մարտեր է մղել հարձակվող ֆաշիստների դեմ, շարքից հանել հարյուրավոր հիտլերականների, խփել ու հրկիզել թշնամու տասնյակ տանկեր, հրանոթներ, ոչնչացրել կրակային շատ կետեր, սակայն այդ բոլոր սխրագործությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ռոստովի արևմտյան մասում՝ Մատվեև Կուրգանում տեղի ունեցած մարտը, որը փառքով պսակեց Օհանյանի մարտակոցի 24 խիզախ հայրենասերներին[1]։

... 1941 թ. նոյեմբերյան ծանր օրերն էին. մինչև ատամները զինված թշնամին շարժվում էր դեպի մեր Հայրենիքի խորքը, ձգտում էր գրավել Մոսկվան, միաժամանակ շարժվում էր դեպի հարավ։

... Թեժ մարտեր էին մղվում Դոնի Ռոստովի շրջակայքում։ Հիտլերականները ուզում էին գրավել Ռոստովը և թափանցել Կովկասի դարպասներից ներս։ Ավիացիայի փոխգ-

[1] Խոսքը գրականության մեջ գոյություն ունեցող 16 խիզախ հրետանավորների մասին է։ Պաշտոնական փաստաթղթերով նրանք 24 էին։

ծողությամբ, ուժգնորեն դեպի Ռոստով էին ներխուժում ֆաշիստական գվներալ Կլեյստի խմբավորման տանկերը։ Այդ տանկերին դեմ հանդիման դուրս եկան սովետական հրետանավորները։

Հրետանային այն զորամասը, որի կազմի մեջ էր լեյտենանտ Օհանյանի մարտկոցը, պաշտպանում էր Ռոստով քաղաքը արևմուտքից՝ Բոլշիե Սալի գյուղի շրջակայքում։ Զորամասին հաջողվել էր մի քանի անգամ ետ շպրտել հիտլերականներին և նրան մեծ կորուստներ պատճառել։

Երկար մարտերից հետո, նոյեմբերի 18-ին թշնամուն հաջողվեց սեպաձև ճեղքել գնդի ընագիծը։ Օհանյանի մարտկոցը կտրվեց իր գնդից և դիրքեր գրավեց Ռոստովի մոտ փոված տափաստանում՝ խաչաձևող երեք ճանապարհների կենտրոնում գտնվող Մատվեև Կուրգան[1] կոչվող բարձունքում, որի պաշտպանությունը Ռոստովի համար մղվող մարտերում ուներ տակտիկական կարևոր նշանակություն։ Պաշտպանել Մատվեև Կուրգանը՝ նշանակում էր պաշտպանել Ռոստովը։ Իսկ պաշտպանել Ռոստովը, նշանակում էր թույլ չտալ թշնամուն ոտք դնելու Ստալինգրադ—Կովկաս։

Լեյտենանտ Օհանյանի հրետանային մարտկոցը բաղկացած էր 24 խիզախ կոմերիտականներից։ Մարտկոցում կային ռուսներ, հայեր, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ, ղազախներ։ Զորամասում կոմերիտականների հրետանային այդ ինտերնացիոնալ մարտկոցը հայտնի էր «Մարտական ընտանիք» անունով։

Այդ «Մարտական ընտանիքի» հոգին միջահասակ՝ տիպիկ հայկական դիմագծերով, արտահայտիչ խոշոր սև աչքերով քսանամյա Սերգեյ Օհանյանն էր։ Օհանյանը այն մարդկան-

[1] Տափաստանային շիրիմաթումբ է։ Ըստ ավանդության շատ հին ժամանակներից այդ բարձունքի մոտ կազակական մի խումբ, ատաման Մատվեյ Մոնոգիովի գլխավորությամբ, մարտնչում էր օտարերկրյա զավթիչների դեմ։ Բարձունքի մոտ կազակները լավ ջարդ են տալիս թշնամու ջոկատներին։ Մարտը տևում է երկու օր ու գիշեր։ Այդ մարտում զոհված հերոս կազակներին թաղում են այդ բարձունքում։ Այդ օրվանից բարձունքը վերածվում է սրբավայրի։ Դարեր շարունակ Դոնի կազակները պահպանել են այդ սրբավայրի հիշատակը։

ցից էր,— գրում են նրա մասին ռազմաճակատի թղթակիցներ Սիխ. Կոտովը և Վլ. Լյասկովսկին,— որոնք առաջին իսկ հանդիպումից ուշադրություն են դրավում իրենց ճկուն խելքով և զարմանալի եռանդով»[2]։ Իրավացիորեն հրամանատարությունը նրան կոչում էր Սասունցի Դավթի արժանավոր հետնորդը։

Ահա նա դիտակետում է. ստուգում է շրջակայքը։ Այդ միջոցին հետախուզությունը պարզում է, որ գերմանական հիսուն տանկ շարժվում են դեպի իրենց գրաված գիրքերը՝ Մատվեև Կուրգանը։ Դրությունը շատ լուրջ էր, բայց 24 խիզախները ընդունում են անհավասար մարտը։ Օհանյանը խիզախ դասավորում է իր հրանոթները և մարտիկներին՝ բլուրի տարբեր կողմերում։ Մարտիկներից յուրաքանչյուրն իր տեղում պատրաստ սպասում էր երիտասարդ հրամանատարի հրամանին։ Օհանյանը դիտակետից անվրդով դիտում էր թշնամու մեքենաների առաջխաղացումը։ Տանկերը արդեն շատ մոտ էին, ամեն մի հապաղում կարող էր կործանիչ լինել։ Այդ ճակատագրական պահին հանկարծ հնչեց Օհանյանի հրամանը՝ «Կրա՛կ»։

Տրվեց առաջին համազարկը, արկերից մեկը ընկավ առջևից եկող թշնամու տանկի թրթուրների տակ և շարքից հանեց այն, իսկ երկրորդ համազարկը կանգնեցնում է մյուս տանկը։ Ֆաշիստները ուղիղ հարվածելու հնարավորություն չունենալով, փորձում են շրջանցել բլուրը։ Օհանյանի մարտկոցի մի քանի դիպուկ համազարկերով շարքից հանվեցին բլուրը շրջանցող տանկերը ևս։ Թշնամին այնուամենայնիվ առաջ է շարժվում անկանոն կ՚բլով։ Այդ միջոցին արկի բեկորից վիրավորվում է մարտիկ Ասլան Վելիևը։

Գնալով մարտը ավելի էր թեժանում։ Գերմանական հինգ տանկ շրթա կազմած շարժելով փոթորկում կրակ բացեցին բլրի վրա։ Սովետական հրետանավորները դրան պատասխանեցին է՚լ ավելի ուժգին կրակով։ Կռվի թ՚ժ պահին հակառակորդի արկը բնկավ հրանոթներից մեկի վրա և շարքից հանեց հրետանավորներ Ֆազլի Ահմեդովին, Մովսես Գուլյանին և Ֆեոդոր Աբրամենկոյին։ Մնացածները կռվում էին ավելի կա-

[2] ՀՊԴՊ արխիվ, ֆ. 150. գ. 1. թ. 43։

տարի։ Թշնամուն այդ օրը ոչ մի կերպ չհաջողվեց մոտենալ բարձունքին։

Հաջողության չհասնելով, հակառակորդը հաջորդ օրը շարունակում էր կատաղի գրոհները։

Այդ գրոհներից մեկի ժամանակ հանկարծ լսվեց մարտկոցի կոմերիտական կազմակերպության քարտուղար Ֆեոդոր Բալեստայի ձայնը,— Կոմերիտականնե՛ր, ի՛նձ մոտ։

Բալեստան համարձակ, վճռական ռազմիկ էր, ուստի մեծ հարգանք ու սեր էր վայելում կոմերիտականների շրջանում և հրամանատարի մոտ։ Ավագ սերժանտ Բալեստան հավաքված կոմերիտականներին խստագրկու աչքով գննելուց հետո, դարձավ նրանց.

— Բանկագին ընկերներ, դուք մենք բոլորս հիմա կգոհվենք, բայց այստեղից մենք չենք հեռանա։ Չէ՞ որ մենք կոմերիտականներ ենք. Թշնամին կկարողանա անցնել միայն մեր դիակների վրայով, ուրեմն երդվենք[1]։

Եվ քաջարի մարտիկները արիաբար սեղմեցին միմյանց ձեռը։ Կոմերիտականները երդվեցին մեռնել, բայց թշնամուն երբեք թույլ չտալ անցնելու Կուրդանի վրայով։

Հեռավոր անտառից դղրդյունով նորից դեպի մարտկոցն էր շարժում գերմանական տանկերի մի նոր մեծ խումբ։ Սերգեյը արագորեն կշռագատեց դրությունը և տվեց համապատասխան հրամաններ։

Թշնամու տանկերը շարժվում էին առաջ։ Եվ երբ նրանք բավականաչափ մոտեցան բլուրին, նորից լսվեց երիտասարդ լեյտենանտի առնական ձայնը՝ «Կրա՛կ»։

Դարձյալ որոտացին հրանոթները. հակառակորդի երկու տանկ ցնցվեցին ու անշարժացան։ Մյուսներն սկսեցին նահ գնալ, սակայն նրանց ետևից խիզախ հրետանավորները հասցրին նոր արկեր և շուտով շարքից դուրս եկան ևս չորս տանկ։ Աննկարագրելի արիություն ցուցաբերեցին Ս. Օհանյանի մարտական ընկերները՝ Վ. Պուդերյովը, Ֆ. Բալեստան. Վ. Վասիլյովը, Ի. Մահմեդովը և ուրիշներ։

Մասվեև Կուրգանում տեղի ունեցող գոտեմարտը կամքի

[1] „Коммунист", 28 июня, 1942 г.

ու արիության լուրջ փորձություն էր։ Սովետական մարտիկները մարտնում էին անընդհատ վրեժխնդրությամբ։ Ամենուրեք պայքարում էին թշնամու արկերը, որոնք մահաբեր բեկորներ էին սփռում խիզախների գլխավերևում, բայց նրանք արհամարհելով մահը, մարանցում էին հերոսաբար, անողոք վրեժ լուծելով զոհված ընկերների, սովետական խաղաղ բնակչության հասցրած անլուր տառապանքների և դաղանությունների համար։

Օրհասական կռվի այդ թեժ պահին Սերգեյ Օհանյանը դիմում է նեբիսայցնում Կոմունիստական պարտիայի շարքերը ընդունվելու համար։ Նոյեմբերի 23-ին մորն ուղարկած նամակում այդ մասին նա նշում էր «... Սիրելի մայրիկ, կարող ես ուրախանալ, մեր ընտանիքում ավելացավ պարտիայի մեկ անդամ ևս»[1]։

Տանկերի օղակը ճեղքելու, գնդի հետ կապը վերականգնելու Օհանյանի բոլոր փորձերը անցան ապարդյուն։ Թշնամու զրոհները հետզհետե դառնում էին ավելի հաճախակի, իսկ մարտկոցի անձնակազմը գնալով նոսրանում էր։ Հերոսի մահով ընկան նշանառուներ՝ Դենիս Բախշիևը, Գրիգորի Կորսունովը։ Վերախմբավորվելով առաջ է շարժվում տանկերի նոր խումբ։ Երբ հակառակորդի տանկերը 500 մետրի վրա էին, նշանառու Սուրեն Հարությունյանը հրանոթային դիպուկ կրակով շարքից հանում է ևս մեկ տանկ։ Շուտով ընկան նաև Սուրեն Հարությունյանը, նշանառու Կարա Շահվալիևը, առաջին հրանոթի ֆիալար Վասիլի Տկաչենկոն, հրանոթ լցնող Իսմայիլ Մահմեդովը, կրտսեր քաղղեկ Սերգեյ Վավիլովը։

Հոգեկան ծանր ապրումների մեջ էր լեյտենանտ Օհանյանը։ Նրա աչքի առաջ մեկը մյուսի հետևից զոհվում էին մարտական ընկերները. թշնամու զրոհները չէին դադարում։

— Շուտով կվերադառնան։ Պատրաստ լինե՛նք,— կարգադրեց Օհանյանը և անցավ դիտակետը։ Նա հեռադիտակով նկատեց, որ իրոք, հարևան պուրակից դուրս սողաց տանկերի նոր խումբը։

---

[1] ՀՊՊԿ արխիվ. Ֆ. 150, գ. 1, թ. 43։

Ղեկավարելով մարտկոցի ընդհանուր գործողությունները, նա միաժամանակ փոխարինում էր զոհված ընկերներին։ Ահա նա դարձյալ հրանոթի մոտ է։ Սերգեյը և՛ նշանառու էր, և՛ արկեր մատակարարող։ Երիտասարդ հրամանատարը կռվում էր ինչպես մի դյուցազուն։ Ոգևորվելով ամեն մի հաջող դիպուածից, նա կրակում էր նոր եռանդով՝ միշտ վրեժի ու ցասման հուրը աչքերում։ Տասը բոպի տևող լարված մարտում Օհանյանին հաջողվեց խփել ֆաշիստական երեք տանկ։ Բլուրի սարոտում այրվում էին թշնամու խփված տանկերը։ Խիզախ հրամանատարը թշնամու արկերի տեղատարափի կրակի տակ շարունակում էր դեկավարել մարտկոցի գործողությունները։ Մեծ տոկունությամբ դիմադրում էին նաև կենդանի մնացած մյուս հրետանավորները։ Կռվի այդ փոթորկոտ ու վճռական պահին թշնամու մի նոր արկ պայթեց հրանոթի մոտ ու տեղնուտեղը խլեց Սերգեյ Օհանյանի կյանքը։ Այսպիսով, հերոսի մահով ընկավ նաև մարտկոցի անընկուն հրամանատարը, հայ ժողովրդի պանծալի զավակը։

Հրաձգությունը դադարեց։ Տիրում էր խոր լռություն։ Կարծես բնությունն էլ էր սգում դյուցազնի կորուստը։ Բայց այդ երկար չտևեց։ Թշնամու տանկերը նորից հարձակման անցան։ Գոտեպանած թշնամին կարծելով, որ մարտկոցը վերջնական հասկեր ջախջախված է, ձեռնարկեց նոր հարձակում։ Սակայն տանկերը հապիլ էին առաջ շարժվել, երբ Օհանյանի մարտկոցից դեպի հակառակորդի մարտակարգերը թռան նորանոր արկեր։ Մարտկոցի հրամանատարությունը իր վրա էր վերցրել լեյտենանտ Պուգիրյովը և հրետանային դիպուկ համազարկեր էր տեղում թշնամու առաջ շարժվող տանկերի վրա։

— Կռվել թեկուզ երկու հոգով, մեկ հոգով, նույնիսկ վիրավոր վիճակում, մահամերձ վիճակում[1] — այս էր Օհանյանի դաստիարակած հրետանավորների վերջին երեքի՝ լեյտենանտ Պուգիրյովի, հրանոթի հրամանատար Լազարևի և ավագ սերժանտ Բալիսաայի հաստատ որոշումը։

---

[1] ՀՊՊԿ արխիվ. ֆ 130, գ. 1, թ. 100։

Հակառակորդը նորից ու նորից էր նետվում դեպի շիրիմաթումբը, կրակի լավ տեղում նրա փոքրաթիվ պաշտպանների վրա։ Լեյտենանտ Վասիլի Պուշերյովին և վիրավոր Ստեփան Լազարևին հաջողվեց խփել ևս մի քանի տանկ։ Շուտով մարտակոցում մնաց միայն Բալեսատան, որը վերջին արկով խփելով թշնամու տանկը նռնակների կապոցը ձեռքին սողաց բլրից ցած և նետվեց առաջ շարժվող տանկի թրթուրների տակ...

Հաջորդ առավոտյան, երբ սովետական զորքերն անցան հարձակման և հրետանային գունդը շարժվեց դեպի բլուրը, այնտեղ զոհված հրետանավորների դիակներն էին ընկած, իսկ շուրջը տասնյակ խփված, հրկիզված ու շարքից հանված ֆաշիստական տանկերը, մեծ թվով սպանված հիտլերականներ։

Բլուրի հյուսիս-արևմտյան մասում նրանք գտան մի գետնափոր, որտեղ հուսաթմբի վրա մահամերձ վիճակում ընկած էր վիրավոր Սալամ Վելիևը։ Վերջինս հազիվ կարողացավ կցկտուր բառերով պատմել իր մարտական ընկերների անօրինակ քաջագործությունների մասին և առհավետ փակեց աչքերը...

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը բարձր գնահատելով զոհված կոմերիտական հրետանավորների հերոսությունը, ֆաշիստական օկուպանտների դեմ մղվող մարտերում հրամանատարության առաջադրանքներն օրինակելի կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու արիության համար 1943 թ. փետրվարի 22-ի հրամանագրով, հետմահու Սովետական Միության Հերոսի կոչում շնորհեց լեյտենանտ Սերգեյ Օհանյանին, կրտսեր քաղաքակ Սերգեյ Վասիլյևին և ավագ սերժանտ Ֆեոդոր Բալեսատային[1]։

Այժմ Մատվեևի Կուրգանում Դոնի էրսխտագետ աշխատավորները 24 խիզախ հրետանավորների եղբայրական գերեզմանի վրա կանգնեցրել են մի հոյակապ հուշարձան հետևյալ մակագրությամբ.

---

[1] Տե՛ս „Правда", 23 февраля, 1943 г.

Հայ ԽՍՀ ԳԱ գրադարան

«Այստեղ թաղված են 16 դյուցազուն ռազմիկներ Հավերժ փառք հերոսներին»:

Իսկ սովետական ժողովուրդը անմահության երդվեր հորինեց իր հերոսների մասին, որոնցից մեկում ասված է.

«Փչիր դու, Դոնից, զովարար քամի,
Ու որոնիր դու նրանց մայրերին
Ու պատմիր, որ այն Կուրգանի վրա
Տասնվեց խիզախ որդի է հանգչում...»[1]

1942 թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի կեսերը, երկու շաբաթ շարունակ արյունահեղ ու կատաղի մարտեր էին մղվում Վլադիկավկազի (Օրջոնիկիձե) շրջանի Գիզել[2] գյուղի համար։ Այդ մարտերը որոշելու էին Կովկասյան հակատամարտի ելքը։

Ռազմաճակատի այս հատվածում թշնամին նետել էր իր 13-րդ և 23-րդ տանկային դիվիզիաները, ռումինական լեռնահետևակային դիվիզիան, «Բրանդենբուրգյան» գունդը, այլյան հրաձիգների ջոկատները, վեց փոզանի ականանետների դիվիզիոնները և գլխավոր հրամանատարության ռեզերվի հրետանու մարտկոցները։

Ռազմաճակատի այս հատվածում մեր զորքերի վիճակը բավականին ծանր էր։ Օր ու գիշեր չէին դադարում մարտերը։ Մի կողմից նրանք նեղվում էին ռազմամթերքի ու պարենամթերքի պակասությունից, իսկ մյուս կողմից աշնանային անընդհատ տեղացող անձրևները հեղեղելով ճանապարհները, խոչընդոտում էին մարտական գործողություններ վարելուն։ Սակայն այս ամենը չէր ընկճում սովետական ռազմիկների կամքը։

Հակառակորդը անընդհատ ոմբակոծության տակ էր պահում Վլադիկավկազն ու նրա շրջակայքը։ Գիզելյան այս նեղ

---

[1] *«Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո» (հոդվածների ժողովածու)։ Երևան, 1957, էջ 270։*

[2] *Գիզելը գտնվում Վլադիկավկազից 1 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք։*

հատվածում, գերմանացիները կենտրոնացրել էին 13 անգամ ավելի տանկ։ Իր տեխնիկայի քանակական գերակշռության շնորհիվ նա հնարավոր էր նետել մեր զորքերին և կարճ ժամանակամիջոցում տիրանալ Վլադիկավկազին։ Երկու կողմերից մարտերին մասնակցում էին ավելի քան 75 հազար զինվոր ու սպա։ Կատաղի մարտերից հետո թշնամուն հաջողվեց տանկային ճակատային հարվածով ճեղքել այդ հատվածը և դուրս գալ Վլադիկավկազի ամրացված շրջանի արտաքին շրջագիծը։

Ֆաշիստական գեներալ Ֆոն Մանշտեյնի կորպուսի տանկային ջոկատները նոյեմբերի 2-ին անցան Դիզելդոն գետը, ներխուժեցին Գիզել։ Գերմանական «Յունկերները» անընդհատ ամրակոծության տակ էին պահում մեր զորամասերի մարտական դասավորությունները։ Ճնշած սովետական զինվորներն ու սպաները ցույց էին տալիս ուժեղ դիմադրություն և բացառիկ արիությամբ պաշտպանում էին հայրենի հողի յուրաքանչյուր թիզը, այնուամենայնիվ գերմանացիներին հաջողվեց ժամանակավորապես գրավել Վլադիկավկազի մատույցներում գտնվող նախալեռնային Ռոսավետ, Ֆիդդոն, Գիզել, Մայրանդաղ գյուղերը։

Սովետական ռազմիկները կռվում էին բացառիկ արիությամբ։ Այդտեղ նրանք պատնեշեցին թշնամու ճանապարհը և թույլ չտվին նրան Գիզելից շարժվելու դեպի Վլադիկավկազ, դեպի Ռազմավիրական ճանապարհը։ Սովետական զորքերը կարողացան կտրել առաջացած թշնամու նահանջի բոլոր ուղիները, թաքցնել նրա մարտական դասավորությունները։

Ֆաշիստական զավթիչների նահանջի համար մնացել էր միայն երեք կիլոմետրանոց նեղ միջանցք, որով նրանք նահանջում էին գիշերները։ Գեներալ Ֆոն Մանշտեյնի տանկիստները տեղավորվելով այդ միջանցքի «պատերի» երկարությամբ, իրենց տանկերը թաղել էին գետնի մեջ և հակատանկային հրանոթների ու ավտոմատավորների աջակցությամբ ստեղծել դիմադրության ուժեղ օջախներ։ Այդտեղ կենտրոնացված էր գերմանական չորս տանկային դիվիզիա։ Եվ եթե գերմանացիներին հաջողվեց իրենց զորքի մի մասը դուրս բերել շրջապատումից, այնուամենայնիվ, նրանք հարկադրված եղան

Գիզելի ռազմադաշտում թողնել իրենց զինվորների ու սպաների հազարավոր դիակներ։ Բավական է նշել այն փաստը, որ տանկային վերահիշյալ շրջ դիվիզիաներից տեղում թաղված մնացին և աշնչացվեցին մոտ 140 տանկ։ Ակամատեսների պատմելով Գիզել գյուղի 1800 տներից կանգուն էին մնացել միայն երկուսը և այն էլ գյուղի ծայրամասում։ Այդ տների այրված մոխրակույտերի կողքին կարելի էր տեսնել թշնամու ոչնչացված և շարքից հանված շատ տանկեր, գնդացիրներ, ավտոմեքենաներ և այլն[1]։

Գիզելի համար մղվող մարտերում մեր հետևակին, հրետանավորներին, տանկիստներին և զորային մյուս միավորումներին ակտիվորեն օգնում էր օդային 4-րդ բանակը։

Օդային չորրորդ բանակի ստորաբաժանումներից մեկում էր ծառայում օդային մարտերի վարպետ, ռազմաճակատում արդեն մեծ համբավ ձեռք բերած Կապիտան Սամսոն Մկրտումյանը։

Սամսոն Մովսեսի Մկրտումյանը ծնվել է 1910 թ. Զանգեզուրի Բռնակոթ գյուղում։ Փոքր հասակից արդեն Սամսոնը հարկադրված էր գյուղական դպրոցում սովորելու հետ միասին բատրակություն անել հարուստների մոտ։

Սամսոնը 14 տարեկան էր, որ մտավ գյուղի կոմերիտական կազմակերպության շարքերը։ 1928 թ. նա տեղափոխվեց Բաքու և աշխատանքի անցավ Բիբի-Հեյբաթի նավթահանքում։ Միաժամանակ սովորում էր Բաքվի ինտերնացիոնալ Մանկավարժական տեխնիկումում։ Այստեղ 1931 թ. նա ընդունվեց ՍՄԿՊ շարքերը։ Կարճ ժամանակից հետո նա ընտրվեց նավթահանքի կոմերիտմիության կազմակերպության կոմիտեի քարտուղար, ապա Բաքվի Վորոշիլովյան շրջանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար։

1933 թ. Ստալինգրադի օդաչուական դպրոցի համար Բաքվի կոմերիտական կազմակերպությունից պահանջ՝ցին 45 երիտասարդների։ Մկրտումյանը անմիջապես դիմեց Աղբրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմին իրեն ուղարկել Ստալինգրադի օդա-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 116, գ. 2, թ. 12։

Սովետական Միության հերոս
Սամսոն Մկրտչյան

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒ. ԳԻՍԵՆՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

չական դպրոցը։ Կենտկոմը ընդառաջեց նրան։ 1935 թ. Մկրտումյանը մեծ առաջադիմությամբ ավարտեց այդ դպրոցը, ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում, միաժամանակ որպես ուսման գերազանցիկ պարգևատրվեց գրպանի ժամացույցով, որի վրա կար հետևյալ մակագրությունը. «Կարմիր Բանակի Ռազմա-օդային Ուժերի Բարձրագույն Ուսումնական Հաստատության պետի կողմից. ուսման մեջ լավագույն ցուցանիշների համար»[1]։

Ստալինգրադի օդաչուական դպրոցը հաջողությամբ ավարտելուց հետո նա հնարավորություն ստացավ կատարելագործվելու Բորիսգլեբսկի դպրոցում թռիչքային բարձր տեխնիկայի մեջ։ Այնուհետև նշանակում ստացավ սկզբում Բաքու, ապա Կոնոտոպ։

Նա իր առաջին մարտական մկրտությունը ստացել էր դեռևս սովետա-ֆիննական պատերազմի ժամանակ։ Երբ ըսկզբվեց Հայրենական պատերազմը, Մկրտումյանը Բելայա Ցերկովում ավիամիավորումներից մեկում էսկադրիլյայի հրամանատարի տեղակալ էր։ Ռազմաճակատ մեկնեց որպես մարտակոծիչ ավիացիայի օդաչու և առաջին իսկ հանդիպման ժամանակ փոխարինեց զոհված հրամանատարին։ Հերոսական գրվածներով լի է Մկրտումյանի մարտական կյանքի ուղին։

1942 թ. մարտի սկիզբն էր։ Միլլերովոյի շրջանում գրոհող ինքնաթիռների մի խումբ, Սովետական Միության Հերոս Մասպանովի հրամանատարությամբ, մոտենում էր մարտական առաջադրանքի կատարման նպատակակետին։ Հիտլերականները նկատելով այդ, զենիթային հրանոթներից կենտրոնացված կրակ բացեցին։ Մկրտումյանը շեշտակի ցած խոյացավ և հողին հավասարեցրեց հետլերականներին ու նրանց մարտկոցը։

Բազմաթիվ են կապիտան Սամսոն Մկրտումյանի մարտական սխրագործությունները։ Սակայն նա իրեն առանձնապես դրսևորեց Կովկասի համար մղվող մարտերում, որոնց ընթացքում հանդես բերեց ռազմիկի լավագույն ունակություն-

---

[1] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 116 գ. 2, թ. 6։

ներ և օրինակելիորեն կատարեց հրամանատարության մարտական բոլոր առաջադրանքները։ Սամսոնի մարտական ընկերները իրավացիորեն նրա մասին ասում էին. «Նա շնչառակի է, որպես սրծիվ, քաջ է որպես առյուծ, սրտով մաքուր է, որպես երեխա»[1]։

... 1942 թ. նոյեմբերին օդային կատաղի մարտեր էին տեղի ունենում Կովկասյան լեռնաշղթայի Օսեթական գյուղերի վրա։ Կապիտան Մկրտումյանի էսկադրիլայի օդաչուները ամեն օր այրում, ոչնչացնում էին թշնամու տասնյակ ինքնաթիռներ, տանկեր, ավտոմեքենաներ, ռադիոկայաններ և կենդանի ուժ։ Էսկադրիլայի բոլոր մարտերը մղվում էին Մկրտումյանի ղեկավարությամբ և նրա անմիջական մասնակցությամբ։

Մի անգամ իր ությակով մարտական առաջադրանք կատարելուց վերադառնալիս, Գրոզնի քաղաքի մոտ Մկրտումյանը նկատեց, որ դեպի ությակն են շարժվում մի խումբ «Յունկերսներ»։ Մկրտումյանը մարտը ընդունելու հնարավորություն չուներ, քանի որ վառելանյութը վերջանալու վրա էր, սակայն այլ ելք չուներ։ Նա հրամայեց ությակին անցնել ճակատային գրոհի։ Սովետական բազեներին հաջողվեց ցրել «Յունկերսների» առաջին խումբը և նույնիսկ նրանցից երկուսին ոչնչացնել։ Սակայն թշնամին չհրաժարվեց սովետական օդաչուներին հետապնդելուց։ Շուտով երևաց «Յունկերսների» մեկ ուրիշ խումբ։ Մկրտումյանի քաջերը հմուտ գործողություններով կարողացան ցրել նաև այդ խումբը և բարեհաջող վայրէջք կատարել իրենց օդանավակայանում։

Կապիտան Մկրտումյանը մասնակցել է նաև Վլադիկավկազի տակ մղվող մարտերին։ Նա տասն օր շարունակ ռմբակոծում էր թշնամու տանկային շարասյուները, սակայն ամենահիշարժան Գիպելի համար մղվող վճռական մարտերն էին, որտեղ Մկրտումյանը հանդես բերեց օդաչուական իր բոլոր ունակություններն ու հմտությունը։

«Մարտ հանուն Հայրենիքի», 1 փետրվարի, 1943 թ.։

Անդրկովկասյան ռազմաճակատի Գիրելյան հատվածում ընդհանուր հարձակման անցնելու օրը՝ նոյեմբերի վեցին, ավիացիայի հրամանատարը կապիտան Մկրտումյանին իր մոտ կանչելով, մարտական առաջադրանք տվեց. «Դուք հայ եք, այն էլ Զանգեզուրցի։ Դուք տարերում լցում եք Ձեզ այնպես, ինչպես տանը։ Կովկասը լավ իմացողներից կազմեցեք էսկադրիլիա։ Ձեզ նշանակում եմ այդ էսկադրիլիայի հրամանատար և հրամայում եմ այրել Գիրելի շրջանում կուտակված գերմանական տանկերը. էսկադրիլիայի ուժերով, ռազմաճակատի այդ հատվածում, օգնել ցամաքային զորքերին՝ կանգնեցնելու և ջախջախելու հիտլերականներին»[1]։

Մկրտումյանը, որն ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային մարտերի վարպետ էր, իսկույն հասկացավ հրամանի հույժ կարևոր և պատասխանատու լինելը. անցավ նրա կատարմանը։ Նախապատրաստական աշխատանք տանելուց հետո Մկրտումյանն իր էսկադրիլիայով անցավ հակառակորդի առաջավոր գիծը, լեռնաշղթայի և կիրճերի վրայով իր մեքենան ուղղեց գեպի նպատակակետը։ Ներքևում օդաչուն նկատեց տանկերի և ավտոմեքենաների շարասյուն։ Կլիմայական չափազանց անբարենպաստ պայմաններում սովետական օդանավերի երևալը այնքան անակնկալ էր, որ թշնամին չկարողացավ ուշքի գալ և քողարկվել։ Մկրտումյանը միշտ գնում էր էսկադրիլիայի առջևից և անձնական օրինակ էր ցույց տալիս իր ընկերներին։ Ահա Մկրտումյանի ինքնաթիռը հարձակման ենթարկվեց ֆաշիստական վեց կործանիչների կողմից։ Նրանցից մեկը ընդհուպ մոտեցավ Մկրտումյանի ինքնաթիռին։ Կատարելով ճարպիկ մանևր, խիզախ օդաչուն հրդեհեց հակառակորդի օդանավը։ Ֆաշիստական մյուս մեքենաները գնդակոծեցին Մկրտումյանի արդեն վնասվածքներ ստացած մեքենան։

Մկրտումյանը վիրավորվեց վեց տեղից՝ գլխից, մեջքից։ Գլխում մնացել էին մանր բեկորներ, աջ թևը ուսագլխից այլևս չէր շարժվում։ Վայրէջք կատարելու ոչ մի հնարավո-

[1] ՀՊՌԿ արխիվ, ֆ. 116, գ. 1, թ. 36։

ռությունն չկար. առջևում կովկասյան նախալեռներն էին իրենց բազմաթիվ լեռնապատվերներով ու կիրճերով. իսկ հետևում թշնամին: Մկրտումյանը արյունաքամ էր լինում:

Հակառակորդի կործանիչները անընդհատ շարունակում էին գնդակոծումը: Մկրտումյանի մեքենան չուներ այլևս ընթացքի համար համապատասխան արագություն: Այդ պատճառով նա ամբողջովին փակեց դաղը և նրան հետապնդող կործանիչը իներցիայով առաջ սլացավ: Մկրտումյանը նրա հետևից բաց է անում գնդացրային կրակահերթ ու շարքից հանում նաև այդ «մեսերշմիդտին»: Մյուս կործանիչները ավելի մեծ կատաղությամբ սկսեցին հետապնդել Մկրտումյանին: Նա վերջապես կարողացավ վայրէջք կատարել սարի դագաթի վրա փոքրիկ հարթավայրում: Հավաքելով ուժերը մի կերպ դուրս եկավ ինքնաթիռից և կորցրեց գիտակցությունը, ուշքի գալով միայն հոսպիտալում՝ վիրահատությունից հետո:

Գիշերի ճակատամարտը ավարտվեց 1942 թ. նոյեմբերի 12-ին, որից հետո թշնամին վերջնականապես կորցրեց հարձակման անցնելու նախաձեռնությունը ու անցավ պաշտպանողական մարտերի, իսկ Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը ոգևորված Ստալինգրադի մոտ սովետական զորքերի կատարած անօրինակ սխրագործություններով, հունվարից անցան ընդհանուր հարձակման, որով և սկսվեց օկուպանտների մասսայական վտարումը նաև Կովկասից:

1942 թ. նոյեմբերի 18-ին Սովետական Ինֆորմբյուրոն հաղորդեց Վլադիկավկազի մոտ գերմանական զորքերի կրած պարտության մասին: Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը Վլադիկավկազի ուղղությամբ կանխեցին թշնամու առաջխաղացումը, այնուհետև հուժկու հարվածով պարտության մատնեցին և գլխովին «...ջախջախեցին գերմանական 13-րդ տանկային դիվիզիան, «Բրանդենբուրգյան» գունդը, 45-րդ հեծանվային գումարտակը, 7-րդ սակրավոր գումարտակը, հակատանկային պաշտպանության 525-րդ դիվիզիոնը, գերմանական 1-ին լեռնա-հրաձգային դիվիզիայի մի գումարտակ և 336-րդ առանձին գումարտակը: Լուրջ կորուստներ պատճառեցին գերմանական 23-րդ տանկային դիվիզիային, ռու-

մինական լեռնա-հրաձգային դիվիզիային և հակառակորդի այլ զորամասերին»[1]։

Սովետական Բանակի մարտիկների ու հրամանատարների այս հաղթանակների մեջ իր բաժինն ուներ նաև Սամսոն Մկրտումյանի ղեկավարած էսկադրիլան, որ Վլադիկավկազի շրջանում կատարել էր 163 մարտական թռիչք, որոնց ընթացքում շարքից հանել և հրդեհել էր 116 ավտոմոբիլնա, 86 գերմանական տանկ՝ չհաշված տեխնիկայի մյուս միջոցները. կենդանի ուժն ու տասնյակ ինքնաթիռներ։

Այդ մարտերում ցուցաբերած բացառիկ խիզախության և հերոսության համար հայրենիքը բարձր գնահատեց իր զավակի մատուցած ծառայությունները և 1942 թ. դեկտեմբերի 13-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով Սամսոն Մովսեսի Մկրտումյանին շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում[2]։

1943 թվականի մայիսին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը Կրեմլում շքանշաններ և մեդալներ էր հանձնում պարգևատրվածներին։ Առաջինը Մ. Ի. Կալինինին մոտեցավ Հարավային ռազմաճակատից եկած օդաչու Սամսոն Մկրտումյանը։ Միխայիլ Իվանովիչը շնորհավորեց հերոսին, հանձնելով նրան Լենինի շքանշանը և «Ոսկե աստղ» մեդալը։

Մկրտումյանը ընդունելով ամենաբարձր պարգևը, համբուրեց այն և երդվեց,— Հայրենիքին է պատկանում իմ կյանքը — Հայաստանին... խոստանում եմ Ձեզ, Բանակցին Միխայիլ Իվանովիչ, ոչնչացնել գերմանական զավթիչներին մինչև լիակատար հաղթանակը, ոչնչացնել նրանց մինչև այն ժամանակ, քանի դեռ բարախում է սիրտս։ Երդվում եմ, որ մինչև վերջ կկատարեմ իմ զինվորական պարտքը»[3]։

Եվ Մկրտումյանը հավատարիմ մնաց իր երդմանը։

Վերջերն ապաքինվելուց հետո Սովետական Միության Հերոս Մկրտումյանը կարճ ժամանակով մեկնեց սովորելու

[1] „Сообщения Советского Информбюро". т. II. Москва. 1944. стр. 315.
[2] „Правда". 14 декабря. 1942 г.
[3] „Коммунист". 29 мая. 1943 г.

Լուրսերը վերջացնելուց հետո նշանակվեց գրոհային փոքր հրամանատարի տեղակալ։ Այդ նոր պաշտոնում նա վերապարձավ ռազմաճակատ, մասնակցեց Կրասնոդար, Նովորոսիյսկ, Զերկասկ, Խարկով, Կիև, Գոմել քաղաքների ազատագրման արյունահեղ մարտերին և վերջին մարտերից մեկում, մարտական առաջադրանք կատարելիս զոհվեց հերոսի մահով։

Ռազմաճակատում անվեհեր օդաչուի համբավ վայելած Սամսոն Մկրտումյանի մարտական հաշվում գրանցված է 219 մարտական թռիչք, որոնց ընթացքում նա այրել և շարքից հանել է թշնամու ավելի քան 10 ֆաշիստական, 140 տանկ, հարյուրավոր մեքենաներ, ռադիոկայաններ, զինամթերային կետեր, պահեստներ և ոչնչացրել մեծ քանակությամբ կենդանի ուժ։ Այդ մարտական թռիչքների ընթացքում նա ցուցաբերել է լավագույն ռազմիկի, փորձված օդաչուի, հմուտ հրամանատարի, կարեկից ընկերոջ լավագույն հատկություններ։ Մկրտումյանը գրանք մինչև իր վերջին շունչը նվիրաբերեց սիրելի Հայրենիքին։

1943 թ. փետրվարի ցրտաշունչ օրերն էին։ Սովետական Բանակի զորամասերը համառ մարտեր էին մղում Ռոստով քաղաքը ազատագրելու համար։ Թշնամին Դոն գետի բարձրադիր ափին վազվզոտ ստեղծել էր ամրություններ սիստ ցանց և հարմար դիրք գրավել պաշտպանողական մարտերի համար։

Սովետական Բանակի մի քանի միավորումներ միաժամանակ մարտական հրաման ստացան՝ ճեղքել գերմանացիների պաշտպանության գիծը, գրավել Ռոստով քաղաքը և ամրանալ այնտեղ։ Բարձրագույն հրամանատարությունից ստանալով այս հրամանը, փետրվարի 7-ի երեկոյան, 28-րդ բանակի շտաբը հրավիրվեցին այդ հատվածում կռվող բոլոր զորամասերի հրամանատարները։ Շտաբում մշակվեց հարձակման պլանը և որոշվեց, թե որ զորամասերն են մասնակցելու հարձակմանը։ Հարձակվող զորամասերի շարքերում էր նաև ավիա

լեյտենանտ Ղուկաս Կարապետի Մադոյանի գումարտակը։ Այդ մարտերում Մադոյանը իր խիզախությամբ մեծ փառքի հասավ, դարձավ Սովետական Միության Հերոս։

Ղուկաս Մադոյանը ծնվել է 1906 թ. Կաղզվանի շրջանի Բերս գյուղում։ Շատ վաղ հասակից զրկվելով ծնողներից, ապաստան գտնելով առաջին համաշխարհային պատերազմի զրկանքները, Մադոյանը հարկադրված էր շարքաշ աշխատանքով վաստակելու իր ապրուստը։ 14 տարեկան հասակից նա մասնակցել է Կարմիր Բանակի շարքերը և այդ ժամանակից սկսվեց նրա գիտակցական գործունեությունը։ Հայկական առաջին գնդում նա ամենափոքրն էր ու բոլորի սիրելին։ Նա մասնակցել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված կռիվներին։ Երբ Վրաստանում սկսվեց ժողովրդական ապստամբությունը մենշևիկների իշխանության դեմ, Մադոյանը գտնվում էր հայկական այն ջոկատում, որն օգնում էր վրաց ժողովրդին՝ երկրում սովետական կարգեր հաստատելուն։ Այնուհետև նա մասնակցել է Հայաստանում սկսված բաղաքացիական կռիվներին։ Այդ կռիվների ընթացքում էր, որ նա ընդունվեց Լենինյան Կոմերիտմիության շարքերը։ Լենինյան կոչի օրերին, 1924 թ. հազարավոր բանվորների հետ մեկտեղ նա ընդունվեց ՍՄԿՊ անդամ։ Մադոյանը Կարմիր Բանակի շարքերում եղել է ընդմիջումներով, իսկ 1940 թ. դարձավ նրա լավագույն կադրային սպաներից մեկը։

Ղուկաս Մադոյանը իր մարտական առաջին մկրտությունը ստանալով դեռևս քաղաքացիական կռիվների ժամանակ, Հայրենական պատերազմի սկզբում մասնակցեց Կիևի, Պոլտավայի, Ստալինոյի պաշտպանական, Ստալինգրադի, Էլիստայի, Բատայսկի ազատագրման կատաղի մարտերին։

Այդ մարտերով անցած ավագ լեյտենանտ Մադոյանը ձեռք էր բերել հրամանատարական մեծ փորձ և մարտ վարելու հմտություն։ Նրա գումարտակը լինելով բանակի ավանգարդային ստորաբաժանումներից մեկը, առաջադրանք ստացավ հարձակվել Բատայսկից Ռոստով տանող երկաթգծի և խճուղային ճանապարհի ուղղությամբ, Դոնի կամուրջով մտնել Ռոստով, գրավել կայարանը, մերձկայարանային թա-

զամասն ու հրապարակը և այդ բոլորը պահել մինչև համապատասխան ուժերի հասնելը։ Մադոյանը հրամանատարությանը խնդրեց թույլ տալ Ռոստովի վրա հարձակվելու ոչ թե Դոնի մեծ կամուրջի ուղղությամբ, որը թշնամին ուժեղ կրակի տակ էր պահում, այլ շեղվել մեկ կիլոմետր դեպի հարավ, որտեղ անանցանելի ճահիճներ էին, որտեղից թշնամին մարանց երբեք չէր սպասում։ Այդտեղից մարտերով պետք է շարժվեր կայարանի ձախ կողմի բարձունքով, գրավեր կայարանն ու քաղաքի կենտրոնը։

Բանակի հրամանատարը հավանություն տվեց Մադոյանի ներկայացրած պլանին, ասելով. «Ընկեր Մադոյան, գործեցեք այնպես, ինչպես նպատակահարմար եք գտնում»[1]։

Առաջադրանքը շատ լուրջ էր ու պատասխանատու, հետևաբար պահանջվում էր ուժերի ավելի մեծ լարում և ռազմական խորիմացություն։ Մադոյանը իսկույն դասավորեց զորամասը։ Այդ նոր կոմպլեկտավորված դիվիզիան բաղկացած էր երեք հետևակային, մեկ հրետանային, երկու գնդացրային վաշտերից, 50 ավտոմատավորներից, ուժեղացված էր ավտոմատային և հրետանային երկու վաշտերով, սակրային երեք վաշտով և օժանդակող այլ ստորաբաժանումներով։

Ճանապարհը Բատայսկից մինչև Ռոստով ծածկված էր համատարած ճահիճներով։ Բոլոր կամուրջները թշնամին պայթեցրել էր։ Սովետական ռազմիկները արհամարհելով թե՛ բնական և թե՛ արհեստական արգելքները, դանդաղ, բայց հաստատ առաջ էին շարժվում։

Լուսաբացին առաջ շարժվող դիվիզիան հասավ Դոնին, բայց գետն անցնելը կապված էր բավականին բարդությունների հետ, որովհետև բոլոր այն հանգույցները, որոնցով հնարավոր էր քաղաք մտնել, թշնամին վերածել էր բարիկադների՝ ըստ որում գետի որոշ տեղերում սառույցը արդեն հալվում էր։ Սակայն երկար մտածելու ժամանակ չկար, անհրաժեշտ էր շուտափույթ վճիռ կայացնել գետանցման մասին։ Մադոյանը որոշեց. հրետանին դիրքավորել գետի ձախ ափին.

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 109, գ. 106, թ. 82։

Սովետական Միության Հերոս
Ղուկաս Մադոյան

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՈՒ. ԳԻՍԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

իսկ ավելի հեշտությամբ տեղափոխվող զենքի մյուս տեսակները և հետևակը զգուշորեն սառույցի վրայով անցկացնել դեպի մյուս ափը։ Նրանք առաջ էին շարժվում փորսող։ Գետն անցնողների առաջին խմբի հետ գնում էր ինքը Մարդոյանը։

Սովետական ռազմիկները թշնամու համար անսպասելիորեն ներխուժեցին Ռոստով, բայց քաղաքում առաջ շարժվելը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Ամենուրեք թշնամին ստեղծել էր փշալարերի խիտ արգելափակոցներ և կրակի տակ էր պահում այն հատվածը, այսինքն՝ քաղաքի հյուսիս-արևմտյան մասը, որտեղից սովետական զինվորները մտել էին քաղաք։ Սակայն թշնամու ստեղծած ոչ մի խոչընդոտ չկարողացավ արգելակել սովետական զորքերի առաջընթացը։ Նրանք գրավեցին Ռոստովի կայարանը։

... Մարտերը դնալով ուժգնում էին ավելի սուր բնույթ։ Քաղաքի յուրաքանչյուր թաղամաս մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցնում։ Ի վերջո, սովետական ռազմիկներին հաջողվեց համառ մարտերով դուրս գալ Բուդյոնովսկայա և Էնգելսի անվան փողոցները, այնտեղից էլ ներթափանցել քաղաքի կենտրոնը և կրնկակոխ հետապնդել հակառակորդին։

Ռազմական գործողությունների վճռական պահին կտրվեց կապը հրամանատարության հետ, որը է՛լ ավելի էր դժվարացնում առաջ շարժվող զորամասի վիճակը։ Մարդոյանը իսկույն վճռեց անելիքը։ Կենտրոնացնելով իր ուժերը նա շարժվեց դեպի քաղաքի կայարանամերձ շրջանը։ Հազիվ էին սովետական քաջերը առաջ շարժվել, երբ գերմանացիները փակեցին նրանց թիկունքը և Մարդոյանի ստորաբաժանումը փոստորեն շրջապատվեց։ Ռոստովի կայարանը գրավելիս գումարտակը ձեռք էր բերել ռազմամթերքի յոթ էշելոն, 30-ից ավելի ավտոմ՛քենաներ, չորս հրանոթ և մեծ քանակությամբ մոտոցիկլետներ։

Գտնվելով թշնամական օղակում գումարտակը շարունակում էր իր մարտական գործողությունները և մեծ կորուստներ պատճառում հիտլերականներին։ Փետրվարի 9-ի վաղ առավոտյան գերմանական երեք ավտոմեքենաներ, որոնց վրա կային 60 օդաչու, ցանկանում էին կտրել երկաթգիծը, անցնել դեպի օդանավակայան։ Դա աննկատ չմնաց սովետական

ռազմիկների աչքից։ Սովետական զինվորները ոչնչացրին գերմանական օդաչուներին մեքենաների հետ մեկտեղ և գերի վերցրին երեք օդաչու։ Գնալով մարտերը թեժանում էին, թշնամին ամբողջությամբ հակագրոհներով ցանկանում էր ոչնչացնել գործող գումարտակին և ետ վերցնել նրա կողմից արդեն գրավված քաղաքի կարևոր թաղամասը։ Այդ նպատակով թշնամին նույն օրը գիշերվա ժամը 12-ին անցավ հակագրոհի։ Մադոյանին հաղորդեցին, որ հակառակորդը դեպի Բուդյոնովսկայա փողոցը շարժել է չորս տանկ, իսկ Էնգելսի փողոցը երկու տանկ՝ հարյուր ավտոմատավորներով։ Մադոյանը կարգադրեց այդ տեղամասերում կանգ իր ստորաբաժանումներին ոչ մի քայլ տեղից չշարժվել, տեղավորվել մոտակա շենքերում և պատրաստ լինել շրջանցման պաշտպանության։ Բանի դեռևս, այնքան դժվարանում էր Բուդյոնովսկայա և Էնգելսի փողոցների փոքրաթիվ պաշտպանների վիճակը։ Քաղաքի կենտրոնից կատաղի գրոհներ տեղի ունեցան դեպի կայարանի հրապարակը, որի պաշտպանությունը անձամբ ղեկավարում էր գումարտակի հրամանատարը։ Բավական է ասել, որ միայն փետրվարի 9-ին հրապարակի պաշտպանները հարկադրված եղան ետ մղելու թշնամու ութ գրոհ։ Մարտերը շարունակվեցին ողջ գիշերը։ Ռազմամթերքը համարյա թե սպառվում էր, անհրաժեշտ էր ունեցածը խնայել, անտեղի չօգտագործել։ Թշնամու այդ օրվա գրոհներին մասնակցում էին 13 տանկ՝ 700 ավտոմատավորների օգնությամբ, սակայն նրանց գործադրած բոլոր միջոցները անցան ապարդյուն։ Այդ կատաղի մարտերում սովետական զինվորները ոչնչացրին թշնամու հինգ տանկ, մոտ 300 հիտլերական։

Մութը վրա էր հասնում, սակայն կապը հարևան զորամասերի և հրամանատարության հետ դեռևս վերականգնված չէր։ Մի բան պարզ էր, որ քաղաքից դուրս նույնպես տեղի էին ունենում կատաղի մարտեր։ Համառ պայքարը շարունակվեց նաև ողջ գիշերը։ Մադոյանի բոլոր ստորաբաժանումները հանդես էին գալիս խստորեն համադրակցված։ Խիզախորեն ձեռնամարտ էին մղում կապիտան Ինկարևի ստորաբաժանման մարտիկները, զգուշորեն էին գործում լեյտենանտ Լուպանգի-

նի հետախույզները, իսկ լեյտենանտ Շիշկովի գնդացրորդները ամենուրեք մահ էին սփռում թշնամու շարքերում։

Փետրվարի 10-ի առավոտյան մարտերն ավելի սաստկացան, ամեն մի գրոհի ժամանակ հակառակորդը ուղարկում էր տասից ավելի տանկ՝ հազար ավտոմատավորների ուղեկցությամբ, որոնք խաչաձև կրակ էին բացում Մադոյանի զորամասի դասավորությունների վրա։ Այդ օրվա ընթացքում գերմանացիները գրոհեցին 23 անգամ. հակառակորդի նպատակը պարզ էր, նա ցանկանում էր անընդհատ գրոհներով չլատել Մադոյանի զորամասի ուժերը, նրա հետ ավելի հեշտությամբ հաշիվ տեսնելու համար։

Մադոյանը իսկույն կռահեց թշնամու մտադրությունը։ Հրամայեց իր բոլոր վաշտերին զբաղեցնել պաշտպանության համար ամենավստահելի շենքերը, ձեռք առնել բոլոր միջոցները՝ թշնամու հակագրոհները լրիվ կանխելու նպատակով։

Թշնամու գրոհներին օժանդակում էր հրետանին, որը կայարանի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմերից կրակ էր բացել Մադոյանի ստորաբաժանման վրա, իսկ հարավ-արևմուտքից անընդհատ կրակում էին չորս ծանր ականանետներ։

Մթնեց։ Մադոյանը իր ուժերը շարժեց դեպի կայարանամերձ շրջանը, ապա անձամբ անցնելով շենքից շենք, փողոցից փողոց, ստուգեց ամեն մի կրակակետ և ամբողջ զորամասը պատրաստեց դիշերային պաշտպանողական մարտերի։

Գիշերը, երբ թշնամին անցավ գրոհի, Մադոյանը հրամայեց գլխավոր ուշադրությունը դարձնել թևերի վրա, որպեսզի թշնամին չկարողանա անջատել ստորաբաժանումները։ Միաժամանակ հրամայեց ամեն մի ստորաբաժանման հրամանատարի՝ սերտ կապ պահպանել իր հետ և տեղյակ պահել ամեն մի գործողության մասին։ Լուսաբացին թշնամին ավիացիայի օժանդակությամբ դիմեց նոր գրոհների։ Երեք «մեսսերշմիդտներ» անընդհատ ռմբակոծում էին։ Օգտվելով այն հանգամանքից, որ պաշտպանվողների մոտ սպառվել էին հակատանկային միջոցները, տանկերն ընդհուպ մոտենում էին դասա-

վորությունները։ Արդեն լրիվ սպառված էր պարենամթերքը, իսկ ռազմամթերքը վերջանալու վրա էր։

Հոկտեմբերի 11-ի գիշերը. շուտով վերջանում է նաև ռազմամթերքը, մնում էր մեկ հաստոցավոր գնդացիր և 14 նռնակ, որոնք օգտագործում էին հույժ կարևոր դեպքերում, հրամանատարները հանգստություն չունեին, շրջում էին դիրքերից դիրք և տալիս էին ցուցումներ ու հրամաններ։

Մադոյանը շտապ հրավիրեց հրամանատարների խորհրդակցություն և հայտնեց, որ թշնամին վաղը կարող է դիմել օդային հարձակման, անհրաժեշտ է տեղափոխվել կայարանի մոտ գտնվող Լենինի անվան գործարանի ձուլման ցեխը և ստանալ նոր ուժերի օգնություն։

Եվ իրոք, հաջորդ առավոտյան գերմանական ինքնաթիռները օդից, իսկ տանկերը ցամաքից սկսեցին համագործակցված գնդակոծել և հրկիզել այն շենքերը, որոնցում տեղավորված էին սովետական մարտիկները։ Դրսում սկսել էր ուժեղ քամի, որը հրդեհը արագորեն տարածում էր շենքից-շենք։ Դրությունը կրիտիկական էր։ Կրակի օղակից դուրս գալու միակ ելքը մնացել էր կայարանի քարածխի պահեստը, այն էլ արդեն բռնկված էր։ Պահեստի երկարությունն էր 100 մետր, լայնությունը՝ 15—20 մետր, որտեղ լցված էր 2 մետր բարձրությամբ քարածուխ։ Քարածխի տակ թշնամին դաղտնի կերպով դրել էր մեծ քանակությամբ պայթուցիկ նյութ։ Պահեստի անկյուններում կանգնած էին թշնամու մի քանի տանկեր, որոնք կրակի տակ էին պահում բոլոր անցուդինները։

Վճիռն օրհասական էր՝ մահ կամ ազատություն։ Հրդեհներից, հրետանու արկերից հալվել էր ձյունը և պահեստի շուրջը լճակներ էին գոյացել։ Մադոյանը վճռեց իր անելիքը։ Նա յուրաքանչյուր ստորաբաժանմանը ավել հետագա գործողությունների պլանը. տեղում հրամանատարությունը հանձնեց լեյտենանտ Շիշկովին, կարգադրելով՝ պաշտպանվել մինչև վերջին մարտիկը, որից հետո տեղափոխվել մի այն իր ազդանշանով. հրամայեց նաև կազմակերպել վիրավոր մարտիկների տեղափոխման գործը։ Անձնական օրինակ ցույց տալով,

Ձախից աջ՝ բանակի գեներալ Մալինովսկի, Ռազմական խորհրդի անդամ Խրուշչով, գեներալ-մայոր Զուկով և Սովետական Միության հերոս Մազոյան։ Ռոստով, 1943 թ., փետրվարի 17

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒՐ ԳՈՒՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Մաղոյանը առաջինը մտավ ջուրը, հրամայեց «իմ հետևից» ու իրեն նետեց այրվող պահեստի բոցերի մեջ, մյուսները հետևեցին նրան։

Պահեստի մոտ կանգնած տանկերը խաչաձև կրակ բացեցին բոցերից օդակից դուրս պրծնող քաջերի վրա։ Այդ պահին խիղախների մի վաշտ, որը վաղօրոք տեղավորված էր ձուլման ցեխում, ուժեղ կրակ բացեց տանկերի ուղղությամբ, հակառակորդի ուշադրությունն իր կողմը գրավելու համար։ Տասը բոպե հետո թշնամին իրոք կրակը փոխադրեց ձուլման ցեխի կողմը։ Այդ բանից օգտվելով մեր մարտիկները մեծ ճարպկությամբ ու զգուշորեն փորսող դուրս գալով հրդեհվող շենքից, ազատվեցին։

Երկու ժամ հետո բոլոր զինվորները վիրավորների հետ միասին արդեն դուրս էին եկել կրակի օղակից։ Այժմ դրությունը մի փոքր բարվոք էր։ Հետախուզությունը տեղեկացնում էր, որ եթե ռազմամթերք ոնենան, կարող են մի քանի օր ևս դիմադրել։ Առաջնահերթ խնդիրը դարձավ ռազմամթերքի ձեռքբերումը։ Փետրվարի 12-ի լուսադրացին կապիտան Ինկարևի ավտոմատավորները անաղմուկ, սողեսող մոտեցան գերմանական ավտոմատավորներին, ձեռնամարտի բռնվեցին, ոչնչացրին նրանց և խլելով նրանց ավտոմատներն ու փամփուշտները, ետ վերադարձան։ Զենք բերած վենքերով նրանք կարողացան դիմադրել թշնամու նոր գրոհներին։ Նույն գիշերը Մաղոյանը իր ուժերից մի վաշտ տեղի պարտիզանների օգնությամբ ուղարկեց յուրայինների մոտ, որոնք վերադառս հրամանատարությանը տեղեկացրին իրենց նեղ վիճակի մասին։

Կատաղի մարտերը շարունակվեցին նաև փետրվարի 13-ի ամբողջ օրը, միայն երեկոյան ժամը 10-ին թշնամին դադարեցրեց կրակը։ Սովետական մարտիկները նորից ետ գրավեցին Ռոստովի կայարանը, նրա շրջակայքը, հրապարակը և իրենց ձեռքում էին պահում նաև Լենինի անվան գործարանի ձուլման ցեխը։

Փետրվարի 14-ի առավոտյան, սովետական զորքերը հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո ճեղքե-

ցին Թշնամու օղակը և միացան Մադոյանի զորամասին. դրանք Ռոստովի ազատագրման վերջին մարտերն էին։

Շատ սրտառուչ էր Մադոյանի բանակայինների հանդիպումը յուրայինների և քաղաքի բնակչության հետ։ Բոլորը գրկախառնվում էին, համբուրվում։ Գեներալի մեքենայի երևալը մի պահ սթափեցրեց Մադոյանին, նա իսկույն մոտեցավ գեներալի մեքենային, զինվորական պատիվ տուավ, ու զեկուցեց հրամանի կատարման մասին։ Հրամանատարը մինչև վերջը չլսեց Մադոյանի զեկուցումը, գրկեց և համբուրեց նրան։

Բանակի գեներալի հրամանով Մադոյանի զորամասը մեկօրյա հանգստից հետո խնդիր ստացավ Սովետական Բանակի մյուս զորամասերի հետ միասին հետապնդել թշնամուն և դուրս գալ Մատվեև Կուրգանը, ջախջախել թշնամու իմբավորումը Տագանրոգի շրջանում և ազատագրել քաղաքը։

Մադոյանը անցավ հրամանի կատարմանը. դասավորեց իր ստորաբաժանումները և դիշերն առաջ շարժվեց։ Լուսադեմին նրանք հասան թշնամու պաշտպանության 131-րդ և 83-րդ բարձունքներին, որոնք գրավելուց հետո շարունակեցին առաջընթացը։

Մարտերի այդ թեժ պահին բանակի շտաբի սուրհանդակը Մադոյանին հանձնեց Հարավ-Արևմտյան ռազմաճակատի Ռազմական խորհրդի անդամ Ն. Ս. Խրուշչովի հեռագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պանծալի հերոս ընկեր Մադոյան, սույնն ստանալուց հրամայում եմ անմիջապես ներկայանալ Ռոստով»[1]։

Ավագ լեյտենանտ Մադոյանը հրավիրվեց Ռոստովում տեղի ունեցող միտինգին։ Ռոստով քաղաքի բնակիչները ցանկանում էին հանդիպել իրենց քաղաքի ազատագրման մարտերի ակտիվ մասնակից Մադոյանի հետ։ Այդ հանդիպումներում նա սովետական ռազմիկին հատուկ համեստությամբ ասում է. «Ես կատարել եմ միայն ու միայն սրբազան պարտքս իմ Հայրենիքի և իմ ժողովրդի հանդեպ, որը դեռ

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 108 գ. 6, թ. 110։

ավարտված չեմ համարում, ես դեռ պետք է կռվեմ մինչև ֆաշիզմի վերջնական ջախջախումը»[1]։

Ռոստով քաղաքն ազատագրելու ժամանակ հրամանատարության առաջադրանքները փայլուն կերպով կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը իր 1943 թ. մարտի 31-ի հրամանագրով հայ ժողովրդի զավակ, ավագ լեյտենանտ Ղուկաս Կարապետի Մադոյանին շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով նրան Լենինի շքանշան և «Ոսկի աստղ» մեդալ[2]։

Նիկոլայ Տիխոնովը բնութագրելով Մադոյանին, գրել է. «... Դյուցազնական է Սովետական Միության Հերոս Ղուկաս Մադոյանի կերպարը։ Առաջինը մտնելով Ռոստով, նա ամրացավ կայարանում և Լենինի անվան գործարանում։ Շրջապատված լինելով թշնամիներով և օրական ետ մղելով թշնամու քսան դրոհները, շրջապատված կրակի օղակով, համարյա առանց զինապաշարի կռվելով և սարսափ տարածելով գերմանացիների վրա, նա ամուր պահեց իր դիրքերը մինչև մեր գլխավոր ուժերի մոտենալը։ Այդ էպիկական մարտը խոսում է այն մասին, որ դաստիարակվելով հերոսականության դպրոցում, Մադոյանը այստեղ դրսևորեց իր ազգային արիությունը, իր նախնիների քաջագործությունը, համառ կերպով մարտնչելով իր հողի, պատվի ու անկախության համար, դարավոր ոգուր թշնամիների դեմ»[3]։

Հետագա մարտերում կատարած սխրագործությունների համար Մադոյանը պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով, Հայրենական պատերազմի I աստիճանի երկու շքանշաններով, «Ստալինգրադի պաշտպանության համար», «Մարտական ծառայությունների համար» մեդալներով։ Արժանահիշատակ է նաև այն, որ ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտը, բարձր գնահատելով ընդհանուր թշնամու՝ գերմանական

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 108, գ. 4, թ. 10։

[2] „Правда", 1 апреля, 1943 г.

[3] «Լենինյան դրոշ», 22 հունիսի, 1947 թ.։

ֆաշիզմի դեմ մղած պայքարում Սովետական Բանակի մի շարք հրամանատարների և շարքային զինվորների մարտական ծառայությունները, նրանց, այդ թվում և ավագ լեյտենանտ Մադոյանին, պարգևատրեց ամերիկյան «Մարտական ծառայությունների համար» մեդալով[1]։

Մադոյանը հետագա մարտերում, Չեխոսլովակիայում ծանր վիրավորվեց և զրկվեց ձախ ոտքից։

Այժմ պահեստի փոխգնդապետ Մադոյանը զբաղվորելով Հայկական ՍՍՌ Սոցիալական ապահովագրության մինիստրությունը, իր ուժերը նվիրաբերում է մեր սոցիալիստական Հայրենիքի բարգավաճման վեհ նպատակին։

* *

Կովկասի համար մղվող հերոսամարտերում իր մարտական գործողություններով աչքի ընկավ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան Կովկասյան նախալեռներից հասավ մինչև Էլբրուսի ափերը՝ անցնելով 3700 կիլոմետր մարտական ուղի, որի ընթացքում մեծ կորուստներ պատճառեց հակառակորդի թվային կենդանի ուժին, այնպես էլ տեխնիկային։ Ռազմաճակատում դիվիզիայի ողջ անձնակազմը բարձր պահեց սովետական զինվորի, հայ ռազմիկի պատիվը և փայլուն կերպով կատարեց հրամանատարության բոլոր մարտական առաջադրանքները։ Բարձրագույն հրամանատարության հրամաններն ու առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար դիվիզիան արժանացավ Կարմիր Դրոշի, Կուտուզովի երկրորդ աստիճանի, Կարմիր Աստղի շքանշանների։

Թամանի համար մղվող մարտերը ցույց տվին, որ հայ ռազմիկները իրենց հերոս նախնիների ժառանգորդներն են։ Նրանք նոր փառքով պսակեցին իրենց հանձնված մարտական

---

[1] «Правда», 24 июня, 1943 г.

Սովետական Միության հերոս
Հունան Ավետիսյան

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՑՈՒՅՑ Դ ՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

գրոշները և Գերագույն Գլխավոր հրամանատարության կողմից արժանացան բարձր գնահատականի — Թամանյան կոչվելու պատվին։ Իսկ նրա 390-րդ և 400-րդ գնդերը Սևաստոպոլի ազատագրման համար մղվող մարտերում առավել աչքի ընկնելու համար արժանացան Սևաստոպոլյան կոչմանը։ Դիվիզիայի անձնակազմից 7333 հոգի պարգևատրվեցին կառավարական շքանշաններով, որոնցից ինը հոգի արժանացան Սովետական Միության Հերոսի պատվավոր կոչմանը։ Դրանցից Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և Զահան Կարախանյանը Կովկասի համար մղվող մարտերում իրենց կյանքի գնով հաղթանակի ուղի հարթեցին զորամասի առաջխաղացման համար։ Այդ հերոսների անունները անջնջելի տառերով գրվեցին Նովորոսիյսկ քաղաքը և Թամանյան ողջ թերակղզին գերմանական զավթիչներից ազատագրելու պատմության մեջ։

Ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը իր անմահ սխրագործությամբ, պատվավոր տեղ գրավեց Սովետական Զինված Ուժերի հերոսների տարեգրքում։

Հունան Մակիչի Ավետիսյանը ծնվել է 1914 թ. Ղափանի շրջանի Մալ գյուղում։ Դառն է եղել նրա մանկությունը նախասովետական Հայաստանում։ Իր իսկական երջանկությունը Հունանը գտավ միայն Հայաստանում Սովետական իշխանության հաստատվելուց հետո։ Մանելով Լենինյան Կոմերիտմիության շարքերը, նա դաստիարակվեց ջերմ հայրենասիրության ոգով։

Երբ 1941 թ. հունիսի 22-ին պատերազմի լուրը հասավ Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզը, ուր ապրում էր և աշխատում Հունանը, դայրույթով լցվեց երիտասարդ հայրենասերի սիրտը։

... 1943 թ. սեպտեմբերի առաջին տասնօրյակն էր։ Հայկական 89-րդ դիվիզիան ծանր մարտեր մղելով շարժվում էր Նովորոսիյսկ քաղաքի ուղղությամբ։ Հակառակորդը ամրացել էր շրջակա «Դոլգայա» և «Մահարնայա գալովկա» բարձունքներում։ Այդ անառապատ սեպաձև բարձունքները, որոնք իջնում էին տեղանքի վրա, հանդիսանում էին Նովորոսիյսկ

քաղաքը մանելու բանալին։ Թշնամին այդ բարձունքներում պատրաստել էր խորը էշելոնացված պաշտպանական ընդգիծ։ Գերմանացիների գրավված պաշտպանության «կապույտ գիծը», որն անցնում էր Նովորոսիյսկ քաղաքով, «Դոլգայա» և «Սախարնայա գալովկա» բարձունքներով և իջնում դեպի Ազովի ծովը, ավելի անառիկ դարձնելու համար հակառակորդը նրա բնական դիրքին ավելացրել էր խորը փորված տրանշեյներ, ականապատված դաշտեր, պատված փշալարերի խիտ ցանցով։

Անհրաժեշտ էր տիրել վերոհիշյալ բարձունքներին, խորտակել հակառակորդի պաշտպանության թմբկահարված «կապույտ գիծը» և դուրս գալ Նովորոսիյսկ քաղաքի մատույցները։ Այս պատասխանատու առաջադրանքը հանձնարարված էր Հյուսիսային Կովկասի Սևծովյան խմբավորման զորամասերին։

Սովետական Բանակի ստորաբաժանումները հրանոթային, գնդացրային ինչպես նաև օդային ուժգին հարվածներով քարուքանդ էին անում թշնամու ամրությունները։ Հակառակորդի լարափակոցներում և ականապատ դաշտերում սովետական սակրավորները անցուղի էին բացում մեր հարձակվող զորամասերի համար։

Գրոհը դեպի բարձունքները սկսվեց սեպտեմբերի 10-ից։ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի մի շարք զորամասեր, որոնց թվում 89-րդ դիվիզիայի 400-րդ գունդը և Սևծովյան խմբավորման մի քանի ստորաբաժանումներ, գրոհում էին Նովորոսիյսկի վրա՝ ծովից, ցեմենտի գործարանների ուղղությամբ։ Իսկ հայկական 89-րդ դիվիզիայի 390-րդ և 526-րդ գնդերը գրոհում էին դեպի բարձունքները։

Կատաղի մարտեր էին մղվում հատկապես «Դոլգայա» բարձունքի շրջանում։ Այս բարձունքի ուղղությամբ հարձակումն սկսվեց սեպտեմբերի 16-ին։ «Դոլգայա» բարձունքի ստորոտում դասավորված էր 390-րդ գնդի առաջին գումարտակը, որի հրամանատարն էր կապիտան Միքայել Մուրադյանը (հետագայում փոխգնդապետ)։ Գումարտակը ոչնչացրել էր

արդեն բարձունքի վրա գտնվող 339-րդ գզոտը, ապա հրամանատարությունից առաջադրանք էր ստացել, հշնչացնել նաև 341-րդ գզոտը։ Այդ գզոտի վրա ձեռնարկված մի քանի գրոհները անհաջողությամբ են ավարտվում։ Վերջապես այդ պատասխանատու առաջադրանքի կատարումը հանձնարարվեց ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի դասակին։

Համակված հրամանատարության առաջադրանքները ճշտորեն կատարելու ցանկությամբ, Հունան Ավետիսյանը իր դասակի գլուխն անցած շարժվում էր բարձունքն ի վեր մագլցող վաշտի առջևից։ Նա քայլ առ քայլ մոտենում էր թշնամու գզոտին։ Ֆաշիստները գնդացրային կրակով փորձում էին նրան մեխել գետնին, բայց ոչ մի ուժ այդ վայրկյանին չէր կարող ընկճել սովետական ռազմիկի կամքը։ Առաջ նետվելու կոչ անելով գրոհող մարտիկներին, Հունանը տեղատարափ կրակի տակ, առաջինը բարձրացավ «Դոլզայա» բարձունքը։ Թշնամու գզոտից արձակվող ուժեղ կրակը արգելակում էր մեր ստորաբաժանումների առաջընթացը։ Հունանը մի թեթև ոստյուն արեց դեպի գզոտը և նռնակների ուղիղ հարվածով լռեցրեց այն։ Վաշտը նորից առաջ շարժվեց, այդ միջոցին հիտլերականները գնդացրային ուժեղ կրակ բացեցին մեկ ուրիշ գզոտից։ Այդտեղ զոհվեցին Ավետիսյանի դասակի չորս խիզախ մարտիկներ, մնացածները ստիպված եղան պառկել։

Շուտով ֆաշիստական գնդակը վիրավորեց նաև Հունանին։ Նա լսեց իր ուժերը և սողաց դեպի հակառակորդի գզոտը։ Արյունաքամ վիճակումն անգամ Հունանի աչքերի առջև պարզորոշ երևում էր թշնամու գնդացրի փողը։ Հունանը նետվեց առաջ, ահա նա հասավ նպատակակետին, հավաքելով իր վերջին ուժերը, թնքվեց առողջ կողքի վրա ու, դառնալով իր կենդանի մնացած ընկերներին, բացականչեց.

— Առա՜ջ, ընկերնե՛ր... Հանո՛ւն հաղթանակի, հանո՛ւն Հայրենիքի[1]...

---

[1] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 63, գ. 11, թ. 12։

Հերոս մարտիկն առաջ նետվեց, կրծքով փակեց թշնամու գլխի հրակնատը, որով և ապահովեց մարտական խնդրի հաջող կատարումը։

Թշնամու գնդացիրը լռեց...

Ավագ սերժանտ Ավետիսյանի հերոսական սխրագործությունը սովետական քաղաքացու՝ հայրենասիրության ամենաբարձր դրսևորումն է։ Նա իր կյանքի գնով ապահովեց հարձակվող զորամասի առաջխաղացումը։ «Դոլգայա» բարձունքը գրավեց և Ավետիսյանի դասակի մարտիկներն առաջինը բարձրացրին կարմիր դրոշը բարձունքի վրա։ Այդ նույն տեղում դասակի մարտիկներն անհուն կսկիծով և միաժամանակ թշնամու նկատմամբ տածած անսահման վրեժխնդրությամբ հողին հանձնեցին Հունան Ավետիսյանի դիակը։ Հունանի կենդանի մնացած զինակիցները թարմ շիրիմի առջև ծնկաչոք երդվեցին՝ վրեժխնդիր լինել թշնամուց, մինչև լիակատար հաղթանակը մարտնչել այնպիսի խիզախությամբ և արիությամբ, ինչպես Հունանը։

Հունան Ավետիսյանի շարքային մարտիկներից Հ. Հակոբյանը հետագայում նրա մասին «Թամանյան դիվիզիայի երգը» բանաստեղծության մեջ գրել է.

Մեր հաղթական կոիվներով ահա,
Վսեմ փառքով մեզ պսակում կրկին.
Եվ թող երկիրը լսի իմանա,
«Դոլգայա» բարձունքի թաղված հերոսին»[1]։

«Հունանի հերոսությունը դա պատահական մի երևույթ չէ,— գրում էր իր հուշերում դիվիզիայի հրամանատար, այժմ պաշտոնաթող գնդապետ-մայոր Նվեր Սաֆարյանը,— որովհետև նա իր մեջ մշակել, ներշնչել էր ռազմիկի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ բարձր կարգապահությունը, դիմացկունությունը, հաստատակամությունը, սիրում էր ռազմական գործը, անձամբ գրաղվում էր թշնամու հետախուզությամբ, մշտական զգաստ, սրրությամբ նվիրված դեպի մեր մեծ Հայ-

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 1, բանաստեղծությունների գործ. թ. 1։

ռենիքը, պատերազմի դժվարությունները միշտ համբերատարությամբ էր հաղթահարում։

Հունանը, որպես կրտսեր հրամանատար, անձամբ զբաղվում էր դասակի մարտական պատրաստականությամբ։ Նա բոլոր ասպարեզներում ցուցաբերած լավագույն օրինակով իր դասակի հետ պատրաստ էր լուծել ամենադժվար մարտական խնդիրը... Ես առաջին անգամ հանդիպեցի մի կրտսեր հրամանատարի, որն ինձ վրա այդպիսի բացառիկ հերոսի և ուժեղ կամքի տեր մարտնչողի տպավորություն թողեց։ Նա լավագույն կերպով իմանում էր թշնամու դասավորությունը և իր մարտական բոլոր խնդիրները»[1]։

Շարունակելով հետամուտ լինել հիտլերականներին, Հունանի[2] մարտական ընկերները գրավեցին Վերխնիյ-Բականսկի շրջանային կենտրոնը, ապա մարտերով հաղարավոր կիլոմետրեր անցնելով՝ ակտիվորեն մասնակցեցին հայրենի հողը թշնամուց ազատագրելուն և Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի գրավման համար մղված մարտերին։

Սովետական կառավարությունը բարձր գնահատելով Հունան Ավետիսյանի սխրագործությունը՝ մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքարում, Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով, նրան հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում[3]։

ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանով ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանը առհավետ դրանցվեց N հրաձգային զորամասի 4-րդ հրաձգային վաշտի ցուցակում[4]։

1954 թ. հունիսին Վերխնիյ-Բականսկի ավանի բնակիչները, տեղական սովետի նախաձեռնությամբ հերոսի և նրա

---

[1] ՀՊԳԿ արխիվ. ֆ. 63. գ. 8. թ. 49։

[2] Հ. Ավետիսյանի մասին հանդամանորեն տե՛ս Ե. Խալեյան, «Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյան» աշխատությունը. Երևան, 1950։

[3] „Известия". 17 мая. 1944 г.

[4] ՀՊԳԿ արխիվ. ֆ. 63. գ. 7. թ. 5։

ընկերների աճյունի վրա, որը վաղորդյա տեղափոխել էին Վերխնիյ-Բականսկի բանվորական ավանի պուրակը, բարձրացրին գրանիտյա մի հոյակապ հուշարձան. դա մի պերճախոս վկայություն էր մեր Մեծ Միության ժողովուրդների անսասան, անխորտակելի բարեկամության ու միասնության։ Այդ հուշարձանի պատվանդանին ամրացված սև մարմարյա շիրիմաքարի վրա գրված է. «Հավերժ փառք հերոսներին, որոնք ընկան մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մղված պայքարում»[1]։ Այդ շիրիմաքարին ամրացված հուշատախտակի վրա փորագրված է.

«Այստեղ թաղված են Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը և նրա մարտական ընկերները..., որոնք ընկան Վերխնիյ-Բականսկի բանվորական ավանի ազատագրման համար գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում, 1943 թ. սեպտեմբերի 16-ին»[2]։

* * *

89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի սակրային գումարտակին առաջադրված էր «Դոլգայա» լեռան 500,7 և 512, ինչպես նաև «Սախարնայա գալովկա» բարձունքները ականազերծել և ճանապարհ բացել մեր հարձակվող զորամասերի համար։ Այդ բարձունքում մղվող մարտերը գնալով ավելի կատաղի և համառ բնույթ ստացան։ Սովետական հրամանին իր կրակը փոխադրեց թշնամու թիկունքը, որով հնարավորություն տվեց մեր սակրավորներին ազատ գործելու։

Սակրավորների այդ ջոկատներից մեկի հրամանատարն էր Ջահան Կարախանյանը, որը Կովկասի պաշտպանության հերոսներից մեկն էր։

Ջահան Սարգսի Կարախանյանը ծնվել է 1918 թ. մայիսի 2-ին Բարանայի շրջանի (այժմ Հայկական ՍՍՌ Նոյեմբերյանի շրջան) Կողբ գյուղում։ Կողբի յոթնամյա դպրոցն ավար-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 63, գ. 11, թ. 10։

[2] Նույն տեղում։

տելուց հետո 1927—1934 թթ. Զահանն իր ուսումը շարունակեց Ալավերդու շրջանի Շնող գյուղի միջնակարգ դպրոցում, որն ավարտեց գերազանց գնահատականներով։

1936 թ. Զահանի կյանքում տեղի ունեցավ մեծ փոփոխություն։ Նա ընդունվեց Լենինյան Կոմերիտմիության շարքերը և դարձավ Կողբ գյուղի կոմերիտական կազմակերպության ակտիվ աշխատողներից մեկը։ 1938 թ. Զահանը կանչվեց Սովետական Բանակ՝ հերթական զինվորական ծառայության։ Նա Սովետական Բանակի շարքերում ձեռք բերեց հաստատակամություն, զինվեց ռազմական ու քաղաքական գիտելիքներով։

1939—1940-ական թվականներին Կարախանյանը մասնակցեց Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը և սպիտակ ֆիններին դեմ մղված պատերազմին։ Զահանը 1940 թ. ընդունվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը, որպես անդամության թեկնածու։ Այդ բարձր պատիվը նրան ոգեշնչում էր կրկնապատկված եռանդով մասնակցելու Մանչուրիայի դեմ խիստ ամրացված երկու գծերի և երեք դոտների ոչնչացմանն ու գրավմանը։ Սովետա-ֆիննական պատերազմի ավարտումից հետո, 1940 թ. վերջում Կարախանյանը զորացրվեց Սովետական Բանակից և աշխատանքի անցավ Երևանի գործարաններից մեկում։

Երբ սկսվեց Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը, Կարախանյանը 1941 թ. սեպտեմբերի 26-ին դիմեց գործարանի Պահպանական բաժանմունքի պարտիական սկզբնական կազմակերպությանը՝ պարտիայի մեջ որպես անդամ ընդունվելու համար։ «... Ցանկանում եմ մարտական այս օրերին մարտի գնալ միայն որպես կոմունիստ։

Խոստանում եմ բոլոր առաջադրանքները կատարել այնպես, ինչպես պահանջվում է ամեն մի պարտիականից։

Խնդրում եմ դիմումս չմերժել։

Դիմող՝ Զ. Կարախանյան»[1]

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, կոպոց 14, գ. 4, թ. 4։

Պարտիզանի շարքերը արագ անդամ ընդունվելուց հետո, Ջահանը 1941 թ. դեկտեմբերին շատ շատերի հետ բանակ մեկնեց։ Նրան նշանակեցին նոր կազմակերպվող հայկական 89-րդ դիվիզիայի սակրային գումարտակում ջոկի հրամանատար և միաժամանակ ընտրեցին վաշտի պարտկազմակերպիչ։

1942 թ. օգոստոսին դիվիզիան մեկնեց ռազմաճակատ և մասնակցեց Կովկասի պաշտպանությանը։ Այդ ծանր օրերին Կարախանյանի ջոկը մասնակցում էր դիվիզիայի մղած մարտերին։ Թշնամու տեղատարածի կրակի տակ Կարախանյանի ջոկը ակտիվ գործում էր դաշտը և ճանապարհ բացում հետևակի համար։

Մոլեգնող մարտերում Կարախանյանի ջոկը նոր առաջադրանք է ստանում՝ ոչնչացնել Սախարնայա գալովկայի վրա տեղավորված այն դոտը, որը խանգարում էր մեր հետևակի առաջխաղացմանը։

Արագորեն կողմնորոշվելով, Կարախանյանը Նովորոսիյսկի դեմենտի գործարանների մոտից ճանապարհ բացելով մարտիկ Շիրին Նազարյանի հետ միասին ձեռքի նռնակներով ոչնչացրեց դոտը, ապա առաջ շարժվող հետևակի համար բարձունքի վրա բացեց անցուղի։ Դրանից հետո հետևակը հնարավորություն ստացավ ոչնչացնել Սախարնայա գալովկայի վրա գտնվող թշնամու ուժերը և գրավել բարձունքը։

Սեպտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը մեր զորամասերը անցնելով հարձակման, մարտեր էին վարում Նովորոսիյսկ քաղաքի համար։ Հրամանատարության կողմից ծրագրված էր՝ դեսանտային խմբերով, ծովի կողմից, գիշերով աննկատելի մոտենալ Նովահանգստին և այդտեղից թափանցել քաղաք։

Այս օպերացիան կատարելու համար հայկական դիվիզիայի սակրային գումարտակի վաշտերից մեկը հանձնարարություն ստացավ օգնել հարևան Դեսանտային դիվիզիային։ Սակրային վաշտի մեջ էր նաև Կարախանյանի ջոկը։

Գիշեր էր։ Մարտական նավերը Գելենջիկից շարժվում էին դեպի Նովորոսիյսկ։ Նրանց շուրջը պայթում էին հարյուրավոր ականներ։ Վաշտը նավակներով շտապում էր իջնել նավահանգիստ և ակտիվ գործելով այն, ապահովել մեր զորա-

Հուշարձան նվիրված Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի և նրա մարտական ընկերների հիշատակին։ Կանգնեցված է Վերին-Բականսկում, 1954 թ. հունիս

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՅՑ ՈՒՍԵՑՄԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ.

մասերի անվտանգ մուտքը քաղաք։ Այնուհետև անհրաժեշտ էր ականազատել ծովափը, մաքրել փշալարերից, որպեսզի հնարավորություն ստեղծվեր դեսանտային ստորաբաժանումներին հեշտությամբ դուրս գալու Նովրոսիյսկի ծովափը։ Այդ միջոցին հանկարծ ծովափը լուսավորվեց թշնամու լուսարձակներով։ Հրանոթները լուսատու արկեր էին նետում։ Դեսանտային նավերն ավելի արագացրին ընթացքը։ Հիտլերականները սկսեցին հրետանային, ականանետային և գնդացրային խաչաձև կրակ, նավերը ընդհուպ մոտեցան ծովափին, որվից իջնելու մարտական հրամանը. «Հանուն Հայրենիքի» բացականչությամբ առաջինը ջուրը նետվեց Ջահանը իր մարտիկներով՝ փորձելով մագլցել սեպաձև ժայռն ի վեր։ Փորձված ստակրավորի՝ Ջահանի աչքից ոչինչ չէր կարող վրիպել։ Մինչև գոտկատեղը կանգնած ջրի մեջ՝ նա գտավ ականապատված տեղանքի առաջին շերտը և իր մարտիկների՝ Մուշեղ Թանգյանի, Սերգեյ Գևորգյանի, Ալեքսանդր Կարապետյանի և մյուսների հետ միասին սկսեց ականներից մաքրել ծովափը։

Թշնամու անընդհատ տեղացող հրետանային ու գնդացրային կրակը ի վիճակի չեղավ խանգարել սովետական ստակրավորներին։ Նրանք շատ արագ և փայլուն կերպով կատարեցին մարտական խնդիրը։

Շուտով Ջահանը իր խմբով հասավ ականապատված դաշտի երկրորդ շերտին, որը ավելի դժվար էր ականազատել, քան նախորդ շերտը։ Երկրորդ շերտի դուրսը ջոկը մինչ այդ տեղեկություն չուներ։ Հայտնաբերելով այն, Ջահանը իր ուշիմությամբ կանխեց զորամասին սպառնացող վտանգը։ Թշնամին նույն կատաղությամբ շարունակում էր կրակ տեղալ նաև այդ տարածության վրա։ Չնայած այդ ուժեղ կրակին, Կարախանյանը իր ընկերներով բայլ առ բայլ ծովափը մաքրեց ականներից։

Ստակրավորների նաևից քաղաք ներթափանցած դեսանտային ստորաբաժանումները փողոցային արյունահեղ մարտեր սկսեցին։ Ստակրավորները նրանց առջևից տնից-տուն, փողոցից-փողոց անցնելով, ճանապարհ էին մաքրում դեսանտային խմբի համար։ Փողոցներից մեկում թշնամին ամրացել

էր սննդամթերքի պահեստի շենքում և այդտեղից հատուցավոր դնդացրով սեղմատարափ կրակ էր թափում առաջ շարժվող դեսանտայինների վրա։ Անհրաժեշտ էր շտապ լռեցնել այդ կրակակետը։ Սակրավորները ճարպիկ մանևրով իրենց զրահապատ շենքի նկուղը, որտեղից հիտլերականները զիմում էին փախուստի։ Շենքը հիտլերականների կողմից ակամայ ամրացված էր, Զահանը հանկարծ նկատեց բիկֆորդյան ծխացող լարերը և նետվելով այն կողմը, միմյանց հետևից կտրատեց լարերը, ազատեց շենքը պայթեցումից և աշնչացումից։

Փրկված էին մարտիկների կյանքը և սննդամթերքի պահեստը։

Հարձակվող դեսանտայինների առաջին խումբը ակամայամատված վայրում շարժվում էր դեպի քաղաքի խորքը։

Դեսանտայինները դրոհում էին ծավալվելիս մի կիսաքանդ շենքի վրա, որտեղից գնդացրային անընդմեջ կրակով հիտլերականները խոչընդոտում էին նրանց առաջխաղացումը։

Մարտերը մոտենում էին շենքին։ Սակրավորների խումբը Կարախանյանի գլխավորությամբ դեսանտայիններին այստեղ ևս օգնության հասավ։ Սակրավորները պաշարեցին շենքը, Զահանը այդտեղ էլ վտանգի ենթարկելով կյանքը, ուժեղ կրակի տակ մարրեց շենքի մատույցներում դրված ականները և թափանցեց շենքի առաջին հարկը։ Սակայն թշնամին համառորեն շարունակում էր կրակել մյուս հարկերից։ Այս անգամ արդեն սակրավորները հարկադրված պայթեցրին թշնամու կողմից պաշտպանության հենակետ դարձած շենքը, որի ավերակների տակ իրենց գերեզմանը գտան գերմանական դավթիչները։

Նորանոր դեսանտային խմբեր էին մոտենում Նովգորոդին և խորանում դեպի քաղաքի կենտրոնը։ Դեսանտայիններին հաջողվեց գրավել Նովգորոդսկոյ քաղաքի առաջին թաղամասը և հարձակումը շարունակել մյուս թաղամասերի վրա։

Այսպիսով, հնգօրյա կատաղի մարտերից հետո, 1943 թ. սեպտեմբերի 16-ին, Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը, Սեծովյան նավատորմի ռազմանավերի և զորամասերի փոխգործողությամբ գրավեցին ստրատեգիական

խոշոր նշանակություն ունեցող Սեծուլյան նավահանգիստներից մեկը՝ Նովորոսիյսկ քաղաքը։

Նովորոսիյսկից դեպի Վերխնիյ-Բականսկ տանող ճանապարհին, որով պետք է անցնեին թշնամուն հետապնդող մեր հետևակը, մոտոմեքենայացված զորամասերը և տանկերը, կար երկաթյա մի մեծ կամուրջ, որի վրայով անցնում էին երկաթուղին և խճուղին։

Կարախանյանն իր ընկերներով հասավ կամուրջին և զարմացած կանգ առավ։— Ի՞նչպես է, որ կամուրջը չեն պայթեցրել,— դարձավ նա ընկերներին։ Մարտիկներից Սերգեյ Հարությունյանը շտապ վրա բերեց.

— Այստեղ մի խաղ կա։ Նրանք առաջ վազեցին։ Ջահանը հանկարծ նկատեց կամուրջի թռիչքի ստորին մասում դրված լարերի խիտ ցանցը։

Հիտլերականները լարերով պատել էին կամուրջը և խնամքով նախապատրաստել նրա պայթեցումը։ Թշնամին, որ հենց նոր էր թողել կամուրջը, նրա տակի ձորակով վեր էր բարձրանում և թփերի հետևից կրակ էր տեղում մեր զորամասերի վրա։ Սովետական հարձակվող զորքերը հետապնդում էին նրան։ Սակրավորներն առաջ շարժվեցին։ Կարախանյանը շարունակում էր զննել կամուրջի առաստաղը, երբ մարտիկ Աշոտ Ռամազյանը բացականչեց. «Վարը վառվում է»։ Ջահանը իսկույն նկատեց այրվող բիկֆորդյան լարը, որի մյուս ծայրը միացած էր ականի պայթուցիչին։ Նա աչքով շափեց վառվող լարը և որոշեց, որ դեռ մեկ քառորդ րոպե ժամանակ կա։

Պետք էր շտապել։ Խիզախ սակրավորը կայծակի արագությամբ գրպանից հանեց մկրատը, բարձրացավ Աշոտի ուսերին, կախ ընկավ կամուրջի ռելսերից և կտրեց այրվող լարի ծայրը։

Նահանջող թշնամին տեսնելով, որ կամուրջը չի պայթում, սկսեց հրետանային ռմբակոծության ենթարկել այն։ Կամուրջը դեռևս փրկված չէր, բավական էր արկերից մեկը դիպչեր կամուրջի որևէ ականի, և կամուրջը հիմնահատակ կլիներ։ Սակրավորներն սկսեցին կամուրջն ականազատել։

Կամուրջը փրկված էր։ Այդ մասին Անդրկովկասյան ռազմաճակատի «Մարտիկ» հայկական թերթում կարդում ենք. «Խիզախ սակրավոր Ջահան Կարախանյանը, որն իր կյանքը վտանգի ենթարկելով, ականազերծ է արել երկաթուղային կամուրջը և անվնաս դարձրել 500 կիլոգրամ պայթուցիկ նյութ, ներկայացված է կառավարական բարձր պարգևի»[1]։ Իսկ դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթը «Համարձակություն և խիզախություն» խորագրով հոդվածում այդ մասին գրում է.

«Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող մարտերում աչքի ընկավ սակրավոր Կարախանյանը, որն իր մարտական սխրագործություններով ուղի բացեց հետևակի համար առաջ շարժվելու»[2]։

Քաղաքից նահանջող հիտլերականներին հետապնդելիս Կարախանյանը Գայդոկում և Վոլչյա-Վորոտայում ականներից (մոտ 198 ական) մաքրեց երեք կամուրջ և ճանապարհ բացեց առաջ շարժվող զորամասերի համար։ Դեպի Ռայևսկայա տանող ճանապարհին Ջահանն իր ընկերներով ականազատեց ևս երեք կամուրջ և փրկեց հարյուրավոր ռազմիկների կյանքը։

Ջոկի հրամանատար Ջահան Կարախանյանը Նովորոսիյսկ քաղաքի համար մղվող մարտերում անվնաս դարձրեց 350 ական, ապա նա աչքի ընկավ նորանոր քաջագործություններով, որոնց համար էլ դիվիզիայի հրամանատարությունը նրան ներկայացրեց կառավարական բարձր պարգևի՝ Սովետական Միության Հերոսի կոչման։

Սակրային գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Գևորգյանը իր հիշողություններում Կարախանյանի մասին ասում է. «Կարախանյանը վերին աստիճանի համեստ, բարեխիղճ, միավորման անձնակազմի կողմից սիրված խիզախ սակրավոր էր։ Նա սակրային գործի մեծ վարպետ լինելով հանդերձ, բարեխղճորեն կատարում էր նաև պարտկազմակերպչի իր պատվավոր պարտականությունները։ Մարտական գործողությունների ընթացքում բազ-

---

[1] «Մարտիկ», 13 նոյեմբերի, 1943 թ.։

[2] «Կարմիր զինվոր», 30 սեպտեմբերի, 1943 թ.։

Սովետական Միության հերոս
Զահան Կարախանյան

ՀԱՅԿ ԴԱՍՏԱՆԻ ԱԿԱ
ՏՈՒՆ ԳԻՏԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

դաժներում, առաջավոր դիրքում մարտիկներին ծանոթացնում էր օրվա թերթերին ու նորությունններին, հաղորդում ռազմաճակատի ու թիկունքի հաջողությունների մասին և ռազմիկների մեջ միշտ վառ պահում հայրենասիրական ոգին»[1]։

Հակառակորդի «անանցանելի» պաշտպանությունը՝ «կապույտ գիծը» ճեղքելուց և Նովորոսիյսկը ազատագրելուց հետո, սովետական զորամասերը սկսեցին մարտեր մղել Վերխնիյ-Բականսկ շրջանային կենտրոնը ազատագրելու համար։ Բնակավայրին տիրելու համար նախ անհրաժեշտ էր հակառակորդին դուրս քշել իր պաշտպանության նոր բնագծից, որն ուներ տակտիկական խոշոր նշանակություն։ Թշնամուն այդ նոր դասավորությունից դուրս վռնդելու համար լուրջ արգելքներ ունեին սակրավորները, քանի որ թշնամին ակամա պատել էր ամբողջ Վերխնիյ-Բականսկը։

Սակրավոր գումարտակի առջև խնդիր դրվեց՝ կարճ ժամանակամիջոցում ամբողջովին ականազերծել տեղանքը։ Այս պատասխանատու մարտական առաջադրանքի կատարման նախաձեռնությունը ստանձնեց Կարախանյանը իր ջոկով։ Նա անձամբ անվնաս դարձրեց մոտ հիսուն ական, որի համար պարգևատրվեց «Գերազանց ականորդ» կրծքանշանով։

1943 թ. սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը համառ մարտեր էին մղում Թաման թերակղզին հիտլերյան օկուպանտներից ազատագրելու համար։ Թամանի համար մղվող մարտերի վճռական հարձակման օրը՝ հոկտեմբերի 4-ին վաշտի հրամանատարը Կարախանյանին առաջադրանք տվեց,— գիշերը հետախուզել այն ուղին, որով առաջ էր շարժվելու մեր հետևակը։

Դժվարին խնդրի հաջող կատարումը լուրջ մտահոգություն էր պատճառում Կարախանյանին։ Նա գիշերը հավաքեց ջոկը, բացատրեց առաջադրանքի նշանակությունը և յուրաքանչյուր մարտիկի կոնկրետ անելիքները։ Տեղանքի հատվածը, որի ուղղությամբ գործում էր սակրավորների ջոկը։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 93, դ. 6, թ. 43։

Թշնամին պահում էր ուժեղ կրակի տակ։ Սակրավորները հաղթահարելով գիշերային խավարը և անծանոթ տեղանքի դժվարությունները, քայլ առ քայլ առաջ էին շարժվում։ Թշնամու խաչաձև կրակի տակ նրանք մոտեցան թշնամու փշալարերի խիտ ցանցին, ձեռքի մկրատներով մեծ վարպետությամբ կտրատեցին լարերը ու բացելով անցուղի հնարավորություն տվեցին մեր հետևակին անարգել առաջ շարժվելու։

Թշնամու գնդացրային կրակակետերից մեկը հանկարծ շեշտակի կրակ բացեց առաջ սողացող Ջահանի վրա։ Մարտը երկարում էր։ Ջահանի մոտ եղած փամփուշտները վերջանում էին։ Թշնամու գնդացիրը դեռևս կրակում էր։ Համարձակ սակրավորը տրոշեց սողեսող մոտենալ կրակակետին և ձեռքի նռնակներով ոչնչացնել գնդացրի ողջ անձնակազմը։ Սողալիս Ջահանը հանկարծ դուռավ թշնամու մի հրացան և մի բանի տուփ փամփուշտ։ Հենց թշնամու այդ զենքով էլ սովետական ռազմիկը լուծեցրեց հակառակորդի կրակակետը։ Հրամանատարության այս առաջադրանքը ևս պատվով կատարելու, առաջ շարժվող ստորաբաժանումների համար անցման ուղի բացելու համար Կարախանյանի ջոկը արժանացավ հրամանատարության և ստորաբաժանման ողջ անձնակազմի գովասանքին։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի սովետական զորքերը ցամաքից հասցված և ծովից դեսանտներ իջեցնելով, բազմօրյա և համառ մարտերի հետևանքով ավարտեցին Թամանյան խմբավորման ջախջախումը և Թամանի թերակղզին ամբողջովին մաքրեցին գերմանական զավթիչներից։

Այսպիսով, լիկվիդացվեց գերմանացիների կարևոր պլացդարմը Կուբանում, գերմանացիները զրկվեցին Ղրիմը պաշտպանելու և դեպի Կովկաս հարձակողական գործողություններ կատարելու հնարավորությունից։

Հիացած հայ ռազմիկների սխրագործություններով՝ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի հրամանատարությունը Հայաստանի աշխատավորությանը և ՀԿՊ Կենտկոմին ուղարկեց հետևյալ շնորհակալական հեռագիրը.

«Հոկտեմբերի 9-ի առավոտյան, ժամը 4-ից 30 րոպե անց, կոտրվեց Թշնամու վերջին դիմադրությունը Թամանի թերակղզում։ Թշնամու ցիր ու ցան զորամասերը, կտրված լինելով ջրային անցուղիներից, սեղմվեցին ծովին և ֆիզիկապես ոչնչացվեցին, զրավվեց ռազմական ավար և վերցվեցին գերիներ։ Կովկասի համար անցյալ տարի աշնանը Թերեքի, Տուապսեի մոտ, Կովկասի գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքներում սկսած ճակատամարտերի վերջին էտապը ավարտվեց։ Թշնամու ջախջախված զորամասերը, պարտություն կրելով՝ խայտառակ կերպով փախան Ղրիմ։ Մարտերում աչքի ընկավ գնդապետ Սաֆարյանի հրամանատարությամբ գործող հայկական դիվիզիան։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի մարտիկները, սերժանտներն ու սպաները մարտական ողջույն են հղում Հայաստանի աշխատավորներին»[1]։

Հայ ռազմիկները ոգևորված ռազմաճակատի հրամանատարության այս շնորհակալական հեռագրից, լցվեցին ավելի մեծ եռանդով։

Համառ և վճռական մարտեր էին մղվում Կերչի համար։ Մարտերի բովի մեջ էր Ջահան Կարախանյանը, որը նոր էր վերադարձել Հայրենիքից և նրա ուշադրության կենտրոնումն էր իրենց դիվիզիայի ողջ պատվիրակությունը[2], առանձնապես իր տված խոստումը հարազատ ժողովրդին. «Հայ ժողովուրդը կարող է միանգամայն վստահ լինել, որ մենք կջախջախենք թշնամուն և մեր հարազատների դիրքը կվերադառնանք միայն փառքով ու հաղթանակով[3]»։ Այդ նույն գաղափարներով և

[1] «Սովետական Հայաստան», 10 հոկտեմբերի, 1943 թ.։

[2] Հայկական դիվիզիային թամանյան կոչում շնորհելու կապակցությամբ, 1943 թ. հոկտեմբերի 23-ին զորամասի հրամանատարությունը Հայրենի իր՝ Սովետականհայաստան ուղարկեց իր պատգամավորներին, այդ թվում Դեորգ Կարապետյանին (պատվիրակության ղեկավար), կարմիրբանակային Ջահան Կարախանյանին, մայոր Սիմոն Նալբանդյանին, բանաստեղծ, ավագ լեյտենանտ Արշալույս Սարոյանին և մի շարք մարտիկների ու սպաների։

[3] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 93, դ. 6, թ. 16։

ցանկությամբ էր նա դաստիարակում իր ջոկի բոլոր մարտիկներին։

1943 թ. դեկտեմբերի 18-ին սակրավոր գումարտակը ստացավ նոր առաջադրանք՝ ձեռք բերած նոր բնագծերի շրջանում դիվիզիայի հրամանատարի համար կառուցել նոր դիտակետ։ Թշնամին անընդհատ կրակ էր տեղում։ Սակրավորները առանց հանգստանալու աշխատում էին ողջ գիշերը։ Առանձնապես մեծ եռանդով ու արագությամբ էր աշխատում Ջահանը։ Բայց այդ պահին հակառակորդի ականներից մեկը պայթեց դիտակետի մուտքի առջև, Ջահանը մահացու վիրավորվեց, ընկերներն իսկույն նրան դուրս բերին կրակի գծից և հասցրին բժշկա-սանիտարական գումարտակը։ Ջահանն ստացել էր բեկորային բազմաթիվ վերքեր։ Բեկորներից մեկը ջարդել էր նրա ձախ թևի արմունկային հոդը և ոսկորը, մյուս բեկորը՝ ձախակողմյան կոնքի ոսկորը, թափանցել էր մկանների մեջ, որի հետևանքով առաջացել էր արյան վարակում։ Ծանր վիրահատությունից հետո Կարախանյանին տեղափոխեցին դաշտային հոսպիտալը։

Այդ օրերին սակրավոր գումարտակի հրամանատարության և մերձավոր ընկերների ուշադրությունը հատած էր հոսպիտալի կողմը, ժամ առ ժամ հետաքրքրվում էին հերոսի առողջությամբ։

Ջահանի վիճակը դնալով ծանրանում էր։ Արյան վարակման հետ մեկտեղ սկսվել էր ուժեղ շնչահեղձություն և դեկտեմբերի 22-ին դադարեց բաբախելուց հերոս մարտիկի սիրտը։

Ջահանի մահը մեծ վիշտ պատճառեց նրա մարտական ընկերներին և հրամանատարությանը։ Նրան մեծ փառքով թաղեցին Ղրիմի Բաքսի գյուղի եղբայրական գերեզմանոցում, որտեղ այժմ Ջահանի և 17 ուրիշ ռազմիկների աճյունի վրա կանգնեցված է հուշարձան։

Կարախանյանի ընկերները նրա ծնողներին գրում են.

«Թանկագին բարեկամներ.

Ձեր որդին, մեր մարտական ընկեր Ջահան Կարախա-

նյանը զոհվեց Հայրենիքի հանդեպ իր սրբազան պարտքը կատարելու ժամանակ, նա որպես հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկը, միշտ բարձր էր պահում նրա ազատասեր վեհությունն ու պատիվը։

Մենք երդվում ենք մեր հիշողության մեջ միշտ վառ պահել մեր խիզախ ու մարտական ընկերոջ՝ Ջահան Կարախանյանի անմահ հիշատակը, անողոք վրեժ լուծել կատաղած թշնամուց։

Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ, մեկի փոխարեն տասը՝ այս է մեր սրբազան խոսքը։

Մի խումբ մարտական ընկերներ»[1]։

Կարախանյանը լինելով համեստ, խիզախ, վառ հայրենասեր, մեծ գործ կատարեց Հայրենական Մեծ պատերազմի դժվարին օրերին՝ Կովկասի համար մղվող մարտերում։ Նա մասնակցեց Մոզդոքեկից — Կերչ մղվող բոլոր մարտերին որոնց ընթացքում պայթյունից փրկեց Նովորոսիյսկի երկաթուղային կամուրջը, մասնակցեց երեք այլ կամուրջների կառուցման և մի շարք կամուրջներ շարքից հանելու գործողություններին, բացի այդ, նա անձամբ անվնաս դարձրեց թշնամու կողմից դրված 900 ական և անձամբ դրել է ավելի քան 3000 ական՝ թշնամու շարժման ճանապարհին։ Նա ոչնչացրել է նաև բաղմաթիվ տանկեր, ավտոմեքենաներ և շատ հիտլերականների։

Գերմանական զավթիչների դեմ մղված մարտերում հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը իր 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով, հետմահու, Սովետական Միության Հերոսի բարձր կոչում շնորհեց կարմիրբանակային Ջահան Կարախանյանին[2]։

Կողք գյուղի աշխատավորների ցանկությամբ հերոսի հիշատակը հավերժացնելու նպատակով, Անտառկոոպ միության

[1] «Կարմիր զինվոր», 12 հունվարի, 1944 թ.։
[2] «Правда», 17 мая 1944 г.

Նախագահության 1946 թ. հունվարի 10-ի որոշմամբ, գյուղում նոր կազմակերպվող փայտամշակման արտելը անվանվեց Սովետական Միության Հերոս Ջահան Կարախանյանի անունով[1]։ Նրա անունով կոչվեց նաև Կողբ գյուղի միջնակարգ դպրոցը։

* * *

Սոցիալիստական Հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում աչքի ընկած ծառայությունների համար հետմահու Սովետական Միության Հերոսի կոչման է արժանացել նաև տվաղ սերժանտ Սուրեն Առաքելյանը։ Այդ կապակցությամբ 1944 թ. մայիսի 19-ին փոխգնդապետ Գ. Հակոբյանը Ս. Առաքելյանի ծնողներին գրում է.

«Մի քանի օր առաջ մեր պանծալի Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայից մենք հաղորդում ստացանք, որ ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով Ձեր որդի, մեր զորամասի քաջարի ու անվեհեր մարտիկ Սուրեն Առաքելյանին շնորհել է Սովետական Միության Հերոսի բարձր կոչում։

Սիրում և հարգում էին Սուրենին իր մարտական ընկերները։ Սուրենը միշտ պատվով էր կատարում հրամանատարության ամենապատասխանատու առաջադրանքները։ Նա հաճախ համարձակ հետախուզություններ էր կատարում թշնամու թիկունքում և վերադառնում կարևոր տեղեկություններով։

Քաջարի ու անվախ Սուրենը իր կյանքի գնով ճանապարհ հարթեց մեր առաջխաղացող զորքերի համար։ Ահա թե ինչու բարձր գնահատելով Սուրենի քաջագործությունները, Հայրենիքը նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Հարգելի Առաքելյաններ, Դուք որպես Սուրենի հարազատներ և մենք, որպես նրա մարտական ընկերներ, կարող ենք հպարտանալ, որ Սուրենը արժանացավ այդպիսի բարձր կոչման։ Հայրենական Մեծ պատերազմի բոցաշունչ կռիվնե-

---

[1] Ռ. Գ. Գրիգորյան, «Սովետական Միության Հերոս Ջահան Կարախանյան», Երևան, 1954, էջ 38։

ում նա ապացուցեց, որ Սյունյաց աշխարհի դյուցազնական նախնիների հավատարիմ ժառանգն է, հերոսական հայ ժողովրդի արժանավոր զավակը...»[1]։

1911 թ. Գորիսի շրջանի Տաթև գյուղում է ծնվել Սովետական Միության Հերոս Սուրեն Սմբատի Առաքելյանը։ Շատ փոքր հասակից նա աչքի է ընկնում անվախությամբ և համարձակությամբ։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, 1924 թ. Տաթևում բացվեց առաջին աստիճանի դպրոց, որի առաջին սաներից մեկը Սուրենն էր։ 1928 թ. Առաքելյանը մտավ կոմերիտմիության մեջ, իսկ մեկ տարի հետո արդեն ղեկավարում էր դպրոցի աշակերտական ԼԿԵՄ կազմակերպության աշխատանքները։

Գյուղի սոցիալիստական շինարարության տարիներին Սուրենը առաջիններից մեկն էր, որ մտավ կոլտնտեսություն։ 1933 թ. նա զորակոչվեց Կարմիր Բանակ և ծառայեց Էջմիածնի հեծյալ գնդում, որտեղ գնդի հրամանատարը Ի. Ք. Բագրամյանն էր (այժմ Սովետական Միության Մարշալ)։ Զորացրվելուց հետո Առաքելյանը աշխատանքի անցավ Գորիսի շրջանի միլիցիայի բաժանմունքում։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից Սուրենը Սովետական Բանակի շարքերումն էր։

...1942 թ. ամռանը, երբ թշնամին ձգտում էր թափանցել Դոնի ավազանը, Կուբանի հովիտը, հասնել Վոլգա գետին, խցկվել Կովկաս ու տեր դառնալ Գրոզնու և Բաքվի նավթին, հերոսական Սովետական Բանակի մարտակարգումն էր գտնվում նաև քաջ ռազմիկ Սուրեն Առաքելյանը։ Թամանյան փառապանծ դիվիզիայի կազմում նա մասնակցեց Կովկասի համար մղվող թե՛ պաշտպանողական և թե՛ հարձակողական բոլոր մարտերին։

Ռազմաճակատում, 1943 թ. հունվարին Առաքելյանն ընդունվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը։ Նա իր սխրագործությունների, համարձակության և

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 68, գ. 3, էջ 1—3։

անվնասությունն համար վայելում էր զորամասի հրամանատարության և մարտիկների վստահությունն ու հարգանքը։

1943 թ. սեպտեմբերի 18-ն էր։ Երրորդ օրն էր, ինչ կատաղի մարտեր էին մղվում Կուրբատսկայա բնակավայրի և նրա մոտ գտնվող բարձունքի համար։ Հակառակորդը այդտեղ ստեղծել էր ամուր պաշտպանության բնագիծ ու մոլեգնող կրակով դիմադրում էր մեր գոմարտակների առաջխաղացմանը։ Մարտերը քանի գնում, այնքան թեժանում էին, մղվում էին նաև ուժեղ օդային մարտեր։

Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի 526-րդ գնդի դասակներից մեկը, որի կազմումն էր ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը, գտնվում էր վերոհիշյալ բարձունքի ստորոտում։ Ամբողջ կրակագիծը հսկայական լայնությամբ ու խորությամբ վերցրված էր ականանետային, գնդացրային և հրետանային կրակի տակ։

Դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Սամվել Մալխասյանը հրաման ստացավ՝ թևանցել թշնամու ամրությունները և գրավել դրանք։

Ստանալով մարտական խնդիր, ավագ սերժանտ Առաքելյանը, դասակի հրամանատարի թույլտվությամբ, իր ջոկը տարավ ստորաբաժանման առջևից։ Նա որոշել էր առաջինը հասնել բարձունքը։

Մարտի վճռական պահին վիրավորվեց դասակի հրամանատարը և Առաքելյանն անցնելով դասակի գլուխը, իր ուղղիկներին առաջնորդեց դրոհի։ Զինվորները ավտոմատային կրակ էին տեղում թշնամու վրա և առաջ շարժվում։ Սակայն, դրությունը գնալով դառնում էր ավելի լարված։ Բարձունքից թշնամու խոշոր տրամաչափի գնդացիրը հանգիստ չէր տալիս սովետական ուղղիկներին և անընդհատ խանգարում էր նրանց առաջխաղացմանը։

Ավագ սերժանտ Առաքելյանը լցված վրեժի ցասումով, դիմեց վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Գրիգոր Զոհրաբյանին. «Թույլ տվեք գնալ և գրավել բարձունքը»[1]։ Վաշտի

[1] ՀՊԿ արխիվ, ֆ. 58, գ. 2, թ. 3։

Սովետական Միության հերոս, ավագ սերժանտ
Սուրեն Սմբատի Առաքելյան

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒ. Դ. ՍԵՆՏՍԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

հրամանատարը իր համաձայնությունը տալու հետ մեկտեղ արիասիրտ Սուրենին հանձնեց նաև կարմիր դրոշը։

Առաքելյանը դրոշը ձեռքին նետվեց առաջ՝ գոչելով. «Առա՜ջ, իմ մարտիկնե՛ր, առա՜ջ, հանո՛ւն հայ ժողովրդի պատվի, հանո՛ւն Սովետական Հայաստանի»[1]։

Բարձունքի լանջերին մահու և կենաց մարտ սկսվեց գրոհող սովետական մարտիկների և հիտլերականների միջև։ Մի պահ թվում էր, որ անհնարին է հաղթահարել թշնամու ստեղծած կրակային շերտը և տեղատարափ կրակի միջով հասնել նրա պաշտպանության հենակետերին։ Բոլորից առաջ սողնող և կարճ թռիչքներով դեպի բարձունքն էր առաջանում Սուրենը։ Իր օրինակով նա սխրագործությունների էր ոգեշնչում բոլոր մարտիկներին։

Առաքելյանին հակառակորդից բաժանում էր միայն երեսուն մետր տարածություն, երբ նա թշնամու դզոտը նետեց երկու նռնակ։ Հակառակորդի կրակակետը լռեց, մարտիկները ոտքի ելան, գրոհեցին բարձունքը։ Քիչ հետո այդ թևից սկսեց գործել թշնամու հաստոցավոր գնդացիրը։ Սուրենի շուրջը պայթեցին մի քանի նռնակներ։ Նա շուտ եկավ դեպի նոր գործող գնդացիրը, այդ ուղղությամբ մի քանի գնդակ արձակեց և նետվեց դեպի դզոտի հրակնատը։

Հիտլերականները նրա վրա բաց արին համազարկային կրակ։ Այդ վայրկյանին քաջարի հրամանատարին միաժամանակ խոցեցին ֆաշիստական գնդացրի մի քանի գնդակներ. նա ձեռքով բռնեց կրծքի վերքը, լարեց վերջին ուժերը, շուտ եկավ դեպի դզոտը գրոհող իր մարտիկներին, արտասանեց ևս մի քանի քաջալերիչ բառեր, ապա դարձյալ նետվեց դեպի թշնամու հրակնատը՝ նպատակ ունենալով իր մարմնով փակել այն։ Սակայն հակառակորդի հաստոցավոր գնդացրի հերթական կրակոցը նրան երկու կես արեց և անվեհեր ռազմիկը անշնչացած ընկավ հրակնատի առջև։ Վրեժով լցված նրա մարտիկները կատաղի ձեռնամարտի նետվեցին։ Անողոք եղավ վրեժը։ Թշնամին ոչնչացվեց և բարձունքում ծածանվեց հաղթանակի դրոշը։

---

[1] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 50, գ. 1. թ. 1։

Բնութագրելով Սուրեն Առաքելյանի սխրագործությունը, գնդի քաղաքական գծով տեղակալ մայոր Պապիկ Ավալյանը[1] 1943 թ. հոկտեմբերի 24-ին գրել է.

«Գալիք սերունդը երբեք չի մոռանա վառվռուն այն երիտասարդին, հայ ժողովրդի ծոցից ելած անձնազոհ այն հերոսին, որը հետևելով հանրահռչակ անմահ հերոս Ալեքսանդր Մատրոսովի օրինակին, իր մարմնով ծածկեց ֆաշիստական ծանր գնդացրի հրակնատը և իր կյանքի գնով ապահովեց հայ ժողովրդի հաղթական զորամասի առաջխաղացումը։ Դա վառվռուն այն երիտասարդն էր, որի մասին այնքան հպարտությամբ գրեցին ֆրոնտային և կենտրոնական թերթերը։ Դա ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանն էր»[2]։

Մեր հայրենիքի ազատության ու անկախության մարտերում զոհված հերոսների հիշատակը հավերժացնելու համար Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թ. սեպտեմբերի 2-ի հրամանագրով Հայկական ՍՍՌ մի շարք միջնակարգ դպրոցների, այդ թվում Ղափանի շրջանի Ծավ գյուղի ոչ-լրիվ միջնակարգ, Գորիսի շրջանի Տաթև գյուղի ոչ-լրիվ միջնակարգ, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի միջնակարգ և Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի միջնակարգ դպրոցները, որտեղ սովորել և դաստիարակվել էին Սովետական Միության հերոսներ՝ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը, Ջահան Կարախանյանը և Սամսոն Մկրտումյանը, պարգևատրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով[3]։

89-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որն իր շարքերում դաստիարակեց հաղթարվեր խիզախներ, Սովետական Միության տասնյակ հերոսներ, Հայրենական պատերազմի կատաղի մարտերում իր դրոշը պահեց փառքով, այն Կովկասյան նախալեռներից հասցնելով մինչև Բեռլին։

[1] Զոհվել է 1945 թ. ապրիլին, Օդեր գետի մոտ մղված մարտերում։

[2] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 1, գործ մայոր Պապիկ Ավալյանի, թ. 16։

[3] «Սովետական Հայաստան», 3 սեպտեմբերի, 1944 թ.։

Հայկական Թամանյան դիվիզիայի խիզախներից՝ մայոր Հրանտ Բարայանը, կապիտան Սիմոն Բաղդասարյանը, ավագ լեյտենանտ Խորեն Խաչատրյանը, գվարդիայի ավագ սերժանտ Հարություն Մկրտչյանը, ավագ սերժանտ Այդին Հարությունյանը, ավագ սերժանտ Վարդգես Ռոստոմյանը դաստիարակվելով փառապսնծ դիվիզիայի շարքերում, իրենց առաջին մարտական մկրտությունն ստանալով Կովկասի արյունահեղ մարտերում, այնուհետև մասնակցեցին Ղրիմի, Լենինգրադի ազատագրման, Բեռլինի գրավման մարտերին։ Այդ մարտերում հանդես բերած բացառիկ խիզախության, արիության և հերոսության համար նրանք արժանացան Սովետական Միության Հերոսի կոչման։

Հարազատ Կովկասի համար մղվող ազատագրական մարտերում ակտիվորեն մասնակցում էր սովետա-ֆիննական պատերազմի մասնակից, փոխգնդապետ Գուրգեն (Գրիգոր) Հայրապետյանը։ Նա իր ողջ ռազմական ունակությունները ի սպաս դրեց Հայրենիքի պաշտպանության գործին, սկսելով իր մարտուղին Հայրենական պատերազմի սկզբին Նարվա, Լուգա քաղաքներից, անցնելով պատերազմի երկրորդ էտապում՝ Կովկաս 409-րդ Հայկական դիվիզիայի շարքերում, մասնակցեց Կուբանի ազատագրմանը, այնուհետև Չեմյովկա, Դնեպրոդերժինսկ, Կիրովոգրադ, Յասսի, Քիշինյով քաղաքների ազատագրման մարտերին, Դնեստր, Տիսսա գետերի գետանցմանը։ Կիրովոգրադ քաղաքի համար մղվող մարտերում առավել աչքի ընկնելու համար դիվիզիան արժանացավ Կիրովոգրադյան անվանմանը։

Սովետա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ հանդես բերած արիության և հերոսության համար Հայրապետյանը դեռևս 1940 թ. ապրիլի 7-ին արժանացել էր Սովետական Միության Հերոսի կոչման։ Այժմ նրա կուրծքը զարդարում են Լենինի շքանշանը, Ոսկե աստղ մեդալը, Կարմիր դրոշի, երկու Կարմիր Աստղի շքանշանները և շատ մեդալներ։

Կովկասի հերոսական մարտերին մասնակցել են նաև մայոր Ալեքսանդր Մուրդուկովը (Մուրդուկյան), Մայոր Արմեն Հայիրյանը, կապիտան Հրանտ Օհանյանը, գվարդիայի լեյտենանտ Արամ Սաֆարյանը, ավագ սերժանտ Իշխան Սերիբեկյանը, գվարդիայի ավագ սերժանտ Արսեն Օհանյանը, գվարդիայի ավագ սերժանտ Լիպարիտ Իսրայելյանը, գվարդիայի սերժանտ Սուրեն Ասլամազյանը, որոնք իրենց անմահ սխրագործություններով բազմապատկել են Սովետական Բանակի փառքը, հարստացրել հայ ժողովրդի մարտական տրադիցիաները, Սովետական Բանակի տարբեր զորային միավորումների շարքերում անցել մարտական հաղթուղի Կովկասից մինչև Թշնամու իսկ տերիտորիան և իրենց աչքի ընկած ծառայությունների համար արժանացել Սովետական Միության Հերոսի կոչման։

Հայ ժողովուրդը իր սրտի խորքում միշտ վառ է պահում մեր Հայրենիքի ազատության և անկախության մարտերում իրենց անմահ փառքով պսակած դավակների հիշատակը։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0028277

ԳԻՆԸ 70 Կ.

ЦЕНА
№ 2235